

ՉԱՅՆ

NN 7-8 (144-145) ՆՈՒԷՄԻԱ - ՕԳՈՍՏՈՍ 2016թ.

ՆԱՄՄՇԵՆՆԱՎԱԿԱՆ

«ՆԱՄՇԵՆ» ՆԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՆԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ Անվճար

ԿՅԱՆՔԱՄԻԶՈՒԹՄ ՍՂՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ



Հեղինակ՝ Նունե Պ. (Լուս Անջելես)

Уважаемые пассажиры, компания Аэрофлот приветствует Вас на борту самолёта... Лос-Анджелес-Москва...

Լուս Անջելես-Մոսկվա չվերթի հերթական հայտարարությունն է, որ մեկ էլ լսել են 25 տարի, 6 ամիս ու 14 օր առաջ, բայց հակառակ ուղղությամբ: Ոչինչ չի փոխվել, ոչինչ, ուղղակի արանքում՝ կյանքամիջում, սղված մի երիտասարդություն է թողել, միլիոնավոր բաժանումներ իրականացրել: Վերադարձներ էլ է իրականացրել, բայց շահ տ հազվադեպ: Վերադարձողներն էլ ինձ նման սեփական երկիրը որպես տուրիստ մեկնելու՝ 15 օր հետո նույն հայտարարության ներքո վայրէջք են եկել LAX (Լուս Անջելես): Եկել են վազելով շնչելու, վազելով քնելու, ուտելու, աշխատելու... վազելով ապրելու համար: Եկել են նույնիսկ վազելով մեռնելու...:

Չէ, է՛, ինչ քնաբեր, 18 ժամ թռչելը ի՞նչ է այն «25+6+14»-ի համեմատ, որ չդիմանամ կարող եմ կոչվածին: Կողքին նստած միջին տարիքի տղամարդու կոստյումից ու հայացքից անմիջապես ենթադրում եմ, որ տուրիստ է, վերադառնում է տուն: Երկի բարեկամներից կամ հարազատներից մեկը հյուրընկալել, լավ գլուխը լցրել թե. «Ախպեր, թողեք էլի էդ անտեր երգիրը, էտի երգիր չի դառնա: Հեն ա, էկար-տեսար, թազավորի պես ենք արվում ստե: Ուրեքը քոչընդ են, երբ քեֆս ուզի տունն են մղնում, երբ էլ հավես անեն մի էրգու կռուզ ֆռռում, օրական առնում, գալիս են իմ օջախը...» Հաստատ Վեգաս, Սանտա Բարբարա, Սանտա Մոնիկա ծովափ-մոլորակ տարել ման են տվել, մի էրկու սուշի-մուշի, մի քանի տաշի-տուշի ու մարդամեկը լրիվ պատրաստ հիմա տունն է թռնում՝ գրին քարտերը լրացնելու: Հիմա տեսնես ինչ ճոխ-ճոխ է ներկայացնելու «մեր» Ամերիկա «տեղ»-ը: «Օրենքի երկիր է, քաղաքապետն էլ է թիքթե (տուգանք) մուծում: Միլիոն անտեղի երեք չի կանգնացնում, մի խախտում էլ, որ անես, թիքտոր կգրի, ուզում ես հազար հատ քֆուր տուր, վերջում մերսին կասի կեթա: Արա գործը թափած ա, էժանն էլ կա, թանկն էլ կա, էրեխեքը սաղ հայկական դպրոց են գնում, լեզու սկի պետք չի, լրիվ հայ են: Սաղ սարերի վրեքի տները մեր հայերին են, Մերս ու Բիեն (Mercedes, BMW) չեն թողել դիլերները: Կյանք են անում մարդիկ, ախպեր»...

Կյանք են անում մարդիկ, կյանք... Ու արդեն իսկ ինքս ինձ որոշած, որ հենց այսպես էլ պիտի կյանք փոխվի, աչքիս առջև առաջին անգամ մտածում եմ, որ գոնե իմ ապրածը կարելի է ոչ թե կյանք, այլ սպառում անվանել: Իմ սերունդը 90-ականներին միանգամից ուղքի ելավ կյանքը փոխելու: հավետով ու որը Ռուսաստանով, որը Իտալիայով, որը Ֆրանսիայով վայրէջքի եկան:

LAX: Մեկ էլ ե՛րբ ենք էսքան հավետով խոսքերս մեկ արել, չեմ հիշում: Հազարներով քարուքանդ էղանք, տունուտեղը ծախեցինք Բաքվից տարհանված մեր հայրենակիցներին ու մա՛րշ: Կարծես Հայաստանը նյութափոխակալության ժամանակաշրջան էր մտել: Այն բնակարանը, որ վաճառեցինք Երևանում, պապս էր կառուցել իր ձեռքերով: Շատ երիտասարդ էր մահացել, 4 տղաներին թողել տատիս խնամքին: Տատս էլ հետագայում տղաներին հերթով պսակել, տունը 4 մասի բաժանել, հաշտ ու համերաշխ ապրել էինք երկար տարիներ: Բաքվից փախած մի մեծ գերդաստան գնեց մեզանից մեր տունը ու մինչ մեր գործերը դեռ չէին հաստատվել, նրանք ստիպված տեղափոխվեցին մեր տուն ու 8 ամիս միասին ապրեցինք: Ընդհանուր կազմում էինք 47 հոգի, 4 իրար կպած բաժնիների մեջ: Այդ օրերը սիրով ու ափսոսանքով եմ հիշում: Ի՛նչ մարդիկ էին, ի՛նչ հրաշալի օրեր ապրեցինք միասին: Միասին եփում, միասին ուտում: Միասին էրեխա դաստիարակում... ու ծիծաղում անվերջ, անսպառ, ուրախ ու հարազատ: Բաժանումն էլ ահագին ծանր էր, իրոք: Լուսում ուղիղ մի տարի հետո հանդիպեցինք: Իրար ետևից եկան, տեղավորվեցին մեզանից ոչ հեռու, բայց մինչև հիմա իրար չենք այցելել: Ըհ, սա Հայաստանը չէ, սրան Ամերիկա են ասում...

Մեր տուրիստ ախպերը անհանգիստ շարժվում է՝ օդանավի նեղ աթոռին չհարմարվելով, ես ակամայից մտածում եմ, որ Աէրոֆլոտը լավ երես է առել: Հերիք չի մի լավ փող է աշխատում մեր հայերի հաշվին, մի հատ էլ ինքնաթիռների մեջ շարքեր են ավելացրել, նստատեղերը նեղացրել, որ ավելի շատ նյութափոխեն, կամ մարդափոխեն Հայաստանը: Աչքածակեր, այ՛ մարդ, կտանե՛ք էլի, ու՛ր եք շտապում...

Չվերցնե՞մ սրանց գլխին մի լավ ցավանք ավելացնեմ, բողբոջեմ, բարկանամ, լավ կծեմ, մատիս վրա խաղցնեմ յուտչիկով, բանով՝ հանգստանա՞մ...: Ու՛ր եք տանում մեզ մեր տներին, այ տնավերներ...: Կողքին առիթ է փնտրում խոսակցություն սկսելու, բայց հավես չունեն, հաստատ հակառակվելու եմ, հետո հարցնի.

- Դու էլ բողբոջելու տեղ ունե՞ս, հեն ա ասում ես 26 տարիս Ամերիկա ես, սիթի-զին աղջիկ, լեզուն գիտես, գործը ունես... Հա՛ բա՛, բողբոջավոր եմ, բա ի՛նչ եմ:

Մեր սերունդը հեշտ չապրեց այդտեղ, այս «դրախտ» երկրում: Սա այն սերունդն էր, որ նոր-նոր Ամերիկա մտած, դեռ ամիսը 800 \$ վարձն ու բիլերը չհավաքած, մի հատ էլ լավ տուգանք էր ուտում ոստիկանից, օրենքը չհիմնադրում, անկապ-անկապ խախտումներ անելու համար: Սիգարետը մեքենայից դուրս նետելու, սխալ տեղ կանգ առնելու, գիծ տրորելու, չգիտեմ էլ ինչ-ինչերի համար: Սա այն սերունդն էր, որ տուգանքը կարող էր վարձից թանկ լինել, քանի որ մտածում էր, թե դեռ Հայաստանում է ու կարող է չմուծել, ու այն կրկնապատկվում էր: Մեր սերունդն աչքը չբացած ծերացավ ու չնկատեց ինչպես: Սակայն սերունդն է, որ աշխատանքից գալիս, մինչև սեղանին ձայն կոնքեն, շոքերով քնում էր դիվանի վրա: Առավոտյան 5-ից թաց մազերով քղեջ վազում, մեքենայի մեջ շոքերը փոխում, արագ մի բան ծամում, ատամ լվում ու գծի նման վազում գործի: Մեր սերունդի մեքենաներն ամեն ինչի նման էին, բացի մեքենայից: Սակայն սերունդն էր, որը երիտասարդություն չունեցավ...: Մեր սերունդի երեխաները տատիկ-պապիկին՝ մամա-պապա ասեցին, մեզ՝ մեր անուններով կոչեցին: Մեր երեխեքի քույրը կամ եղբայրը դարձանք, մեզանից ի՛նչ ծնող: Հազար երագ թաղեցինք, կարող քաշեցինք: Չապրեցինք՝ սպասեցինք: Սպասեցինք, որ մի օր տուն ենք գալու: Որ վերադառնալու ենք, գտնենք մեր ընկերներին, մեր դպրոցն ենք գնալու, մեր տունը, փողոցը, այգին...

- Հեն ա, հես ա գալիս ես, 10 օր չես ծգի, էս խոսքս կիշես: Տուրիստ գալը ուրիշ ա, 10 օրը անցավ հետ ես թռչելու: Չկա, էլի, երգիր չկա: Քո իմացած Երևանը չի, հիմա ոչ մեկը մյուսին չի ճանաչում: Սաղ պարսիկները լցվել են Երևան, դառել ա շահի դուքանը...- կշարունակի տուրիստ ախպերը ու կպեշատի:

Դե հիմա լսի, Տուրիստ Իմաստուն: Այ ճիշտ ես ասում, տուրիստ գալը (բայց Ամերիկա) լրիվ ուրիշ ա: Տուրիստին «տուրիստ» են անում (կներքեք ֆրանսերենիս համար) լավագույն դեպքում էլ «կուպիտ» (վայ, էլի): Են էլ անում են հավեսի համար, գլուխ գովալու, կամ էլ մեծերի ասած էջից չիջնելու համար: Ինչ-ինչ, բայց ես քեզանից հաստատ լավ գիտեմ Ամերիկան... Իզուր էլ ծանոթացա սրա հետ...

21 տարեկանս նշեցի Լուսում, այ էր-քան առաջ էր...

Մեզ ընդամենը օվկիանոս էր բաժանում: Ձեր (մեր) Հայաստանում ցուրտ ու մութ էր, սրանց (մեր) Ամերիկաներում ցուրտ ու մութ՝ մեր հոգիներում: Անլեզու, անփող, աննկարագիր ժամանակներ: Բայց ամենամասնաձեղն կարողն էր, որ հեռախոսի բիլի ձևով էր արտահայտվում: Բոպեին 2 դուլար վճարելով, վարձը դեռ չհավաքած՝ հինգ-վեց հարյուր դուլար ծեր ծայրը, հայրենիքի ծայրը լսելու համար էինք վճարում: AT&T-ն էլ իր հերթին էր հայրի ատամները հաշվել այդ տարիներին:

Դժվար է եղել մեր ճանապարհը շատ ավելի: Մեր սերունդը շատ է երագել տաքուկ «ադիալիկով» կծկված, թեյ խմելու

մասին: Մոմի լույսով «Հաղթական կամար» կարդալու մասին: Հարևանից մի երկու գրալ կոֆե ուզելու մասին: Նույնիսկ ցուրտ ու մթի մասին (բայց տանը):

Մենք այն սերունդն ենք, որ արդուկ արեցինք չինացիների արտադրամասերում: Ավտո լվացիք պարսիկների «մոյկեցում»: Մեր մեջ երշիկ կտրող դերասան է եղել, տոպրակ լցնող երկրաբան: Մեր մեջ լեզուն չիմանալու պատճառով պրոր-լեմի մեջ հայտնված ու դատված ուսուցիչ է եղել ու տատիկ խնամող դասախոս: Ես չգիտեմ, արդյոք ա՛յս կողմից եք ճանաչել «մեր» Ամերիկան, թե այն նկարներից, որ շատերը ուղարկում էին լեզուն սեղանների ետևում նստած, որտեղ անապայման պիտի երևային բանանն ու անանասը, որպես ընտանիքի սեղանին նստած տան անդամներ: Եղել է, բոլորիս հետ էլ եղել է, մի նեղվեք, որ ասում եմ: Առանց անգլերեն իմանալու նոր եկած ծանոթ բարեկամի մոտ անգլերեն էլ ենք խոսացել, «օ մայ գադ, քամման, այ դոնթ նո» էլ ենք արել, մեր արևին «ապիթեյններ» էլ ենք լրացրել: Ուրիշի թանկանոց մեքենայի դեկին նստած, կամ Լաս Վեգասում՝ Ֆլամինգոյի դիմաց զգաստ կանգնած նկարները բա... Ցեց ենք, է՛, ցեց, հերիք է որ մի տեղ ընկանք՝ պիտի տարածվենք: Ամեն մեկիս պատին մի հատ ձեռքով նկարած Մասիս, մի քանի խաչքարիկ ու Հայրց այբուբեն: Ամեն մեկիս սրտում մի անհագ կարող, մի չավարտված սիրո պատմություն ու կորցրած մանկության հուշեր: Ամեն մեկիս աչքում մի թեքված բնով թթենի, բակի նստարան ու մի կարուսել: Ամեն մեկիս քթում փշատի հոտ, առավոտյան Երևանի հոտ, հայրենիքի հոտ: Բա որ ասում եմ չենք ապրել, սպասել ենք, չեք հավատում:

Հասա, էրեխեք, տատիկս մի օր ռուսերեն խոսեց: Ֆիլիպին աղջիկներ էին, լկատվել, ձեն ձուն էին հանում հիվանդանոցի սպասասրահում: Իսկ պապիկիս ծանր վիրահատություն էին անում: Աշխարհը մթնել էր տատուս աչքերում: Ես աղջիկներն էլ ավելի էին ոգևորվել, բարձր հռչակ էին դրել: Տատս միանգամից բղավեց - 0000՝, գալավա բալիս: Այո՛, ռուսերենը մեր տատիկների ու պապիկների օտար լեզուն էր Ամերիկաներում:

Խեղճերն ի՛նչ քաշեցին մեր ու մեր երեխեքի ձեռքը՝ միայն Աստուծոն է հայտնի: Ես էլ Հայաստանը չէր, տանիքված՝ բաց երկնքի տակ էրեխա խաղար դրում: Հայաստանը չէր, որ հարևանի երեխայի հետ հավասար, երեխայիդ ներս քաշեր, ձեռները լվանար, հացուպանրի բրդուջ տար ձեռքը, պետքն էղած տեղը մի հատ էլ տուտուզին հասցնեք: Սրան Ամերիկա են ասում: Սա Սուպեր Մարիոյի ու Ռեմբոյի տակ մեծացած սերունդն է, որի երեխայությունը վերջացավ հենց այն րոպեից, երբ հեծանիվը միայն դեկորի համար չենք փառքիցուցում մնաց կանգնած ու մի օր կամ գողացվեց, կամ վաճառվեց «գալուստ-սելուս»: Մեր տատիկները (քոռա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Նայում են Հայկոյին, ծիծաղի փոխարեն թախիծ են նկատում դեմքին: Զէ է՞, ուրեմն քո տեսակն էլ կա Լոսու, Հայկո ջան: Մերոնք էլ մտածում են՝ մենակ չեղողներ ենք մեծացրել: Ընկերուհուս 12 տարեկան տղան անցյալ տարի տատիկի հետ գնաց Հայաստան: Որ վերադարձավ Լոս լրիվ հայաստանցի մայրի տղա էր դարձել: Վա՛, այնքան լավն էր, ո՞նց էր սագում: Լիքը նոր բառեր սովորեցրեց. «լրիվ կտտցրել է, վերջն է՛, դգո՞ղ է»: Մի երկու օր էր եկել էր, ընկերուհիս զանգեց, թե շուտ արի մեր տուն, չեն ուզում մենակ մեռնել: Մի քանի հատ ծայրահեղ վատ հայկոյանք էր սովորել, հանգիստ ասում էր ամեն րոպե: Խառնվեցինք իրար, մինչ բերանը կհակենք, մի քանի հատ էլ իմ մոտ հասցրեց: Ասում են՝ դրանք ապուշ խոսքեր են, շահ-շատ վատ, էլ չասես: Ասում է՝ բա անգլեբենով որ ամեն րոպե ամեն ինչ ասում են, ո՞նց է: Դե արի ու բացատրի, որ Հայաստանը մայր է կոչվում, «Մայր Հայաստան»: Որ Հայաստանը հայրենիք է, որ «Սուրբ Հայրենիք է»: Որ Հայաստանում հայկոյանք չեն տալիս ամեն խոսքից հետո: Որ մեր սուրբ լեզվին մի տեսակ չի նստում, չի սագում վատ խոսքը: Մեր լեզվով Նարեկն ու Սևակն են խոսել, Զարեմն ու Տերյանը: Որ Հայաստանը շատ մեծահոգի հայրենիք է, կնեղանա: Բա նման մոր զավակը կհայկոյի,՝ ա՛յ բալա: Հայաստանը, չնայած, նեղացկոտ չէ: Թողնում իրան, գնում ենք, բայց երբ վերադառնում ենք, մեզ կարոտած մոր նման է ընդունում: Ոչինչ չուզելով, չպահանջելով, անշահախնդիր ու նվիրված, տաքուն ու հարուստ մոր նման: Ա՛յ, Սևակը մի տեղ շատ լավ է ասում. «Մայրը միշտ մայր է, որդիքն են տարբեր...»: Ա՛յ, այս տեսակ տարբերություն, արևա: էլ չասես, հաստատ կնեղանա:

րի ու վարսավիրանոցների շքերթ: Հայ երիտասարդաց միություն, Հայ տիկնանց միություն, հայ, հայ, հայ... Նույնիսկ Հոլիվուդի ամենակենտրոնական մասում թաղամաս կա՝ «Little Armenia» անվանմամբ: Մի տեսակ ունենք մեր մեջ, որ հայրտանում են նման բաներով: Իմ տեսակն էլ շատ ցավով է նայում: Ամերիկյան այս «թոհ ու բոհոս» իրականությանը դժվար հարմարվող մի ժողովուրդ, որ գիտեր ապրել ու ապրեցնել, որ մեծ էր հարգում, որ չէր խառնվում օտար ազգերին, մշակույթ էր պահպանում: Որ արաթներ ուներ ու գնահատում էր ընտանիքի արժեքը, այսօր տուն-տեղ թողել, եկել վարձակալել է ամերիկյաներում: Ու չի հավատում, որ Հայաստանը էլ իրենը չէ, որ Հայաստանը այնտեղ ապրող, նրա լավն ու վատը կրող մեր մյուս կեսին մնաց: Մենք հազիվ տու-



րիստ զանք, մի քանի քուրջ ու փայլա սագնեք, Գառնի, Գեղարդ գնանք, Սևան, Դիլիջան: Մեր երկրի մեջ տուրիստ-տուրիստ խաղանք հերիք չէ, հին ու նոր ծանոթ, ընկեր, բարեկամներին էլ խառնեք իրար ու 15 օր հետո կերկոյն եղած՝ Զվարթնոց օդանավակայանում ծանոթ ձարենք, որ մեր նորմայից ավել բարձրած ձանարկներն ինքնաթիռ թողնի: Իսկ սպասարահի բաժանման քառակուսիում արցունք թափենք, իրար գրկած լացուկոժով անջատվենք կրկին ու քայլենք հյուրընկալ Արթուրի ուղղությամբ: Զէ է, չի փոխվելու ոչինչ, մեզանից ոչ մեկն էլ չի վերադառնալու:

հավես չկա: Թե ասա ինչու՞ երես տվեցի, որ հիմա էլ սրա գլուխ գովալը լսեմ: Ամեն մեկիս մոտ տարբեր է դրսևորվում հայրենիքը: Մեկի համար այն խարխուլված տներով, դրսում փռված լվացքներով, անկանոն երթևեկությամբ, ջրափոսերով ու բակում հավաքված աղբակույտով մի հողատարածք է, որտեղից միայն փախչելը կփրկի: Գնում են, գալիս ու սկսում վատաբանել: Ապրելու տեղ չէ, մարդ գնա, մի 15 օր լավ ման գա, վերադառնա: Գործ չկա, կառավարությունը լավը չէ, թանկություն է, էս է, էն է: Ստածում են ինչպե՞ս է որ մյուս տեղերի վատը չենք տեսնում: Լոսում ամեն ինչ գերազանց հո չի՞: Կյանքում պատերազմ չտեսած երկրում, որ ավագի մեջ անտառ է աճում, որ տարին 8 ամիս ամառ է, որ առատություն է և հնարավորություններ ունի ամեն նախասիրություն

իրականացնելու, հարցրե՞ք՝ օրը քանի՞ անտուն, փողոցներում քնող մարդիկ եք տեսնում: Լոսը միայն Գլենդել-Փասադենա չէ: Հենց այս խոսացողները Դաուն Թաուն չեն գնում, որտեղ մրջնանոցի նման պատերի տակ շարված են անտուն, թափառական մարդիկ, որտեղ թմրանյութը ձեռքի վրա պատվում է, որտեղ աղբամաններից ուտում ու մեջն էլ քնում են հաճախ: Թե՞ մեր ամերիկյաներում քիչ վթարներից մահացած երիտասարդություն կա: Կարո՞ղ է թմրանյութի կախվածությունից տառապողներ չկան: Կամ բարձր դոզայից մահացողներ: Հա՛, կարո՞ղ է բանտերում մերոնցից էլ չկան հա՞... լավ էլի, շատ մի գարգացեք: Հայաստանում ապրող մեր հարազատները, բարեկամներն ու ընկերներն էլ մտածում են՝ դրախտ է, որ կա: Իրականությունը ո՞վ պիտի տեսնի ու ասի ի վերջո: 4 հոգանոց ընտանիքից քանի՞սը պիտի աշխատեն, որ «յուլա գնաք»... Կարո՞ղ է միայն երկուսը, չասեք՝ այո՛, սու՛տ է: Գլենդելում դիլլեր ունեն, վատ չէ, կինս էլ խանութում է աշխատում, Մեյսիզ, հասել ենք այսօր մի բանի:

- Չեր անունն ինչպե՞ս էր, հարցնում եմ:
- Մայք, քուր ջան, ծանոթ է դեմքը,- միանգամից ոգևորվում է Մուկուչը կամ Մինասը կամ Սարսիրոսը կամ Մնացականը:
Ես ծանոթ չեմ քեզ հաստատ, ես մտքով հիմա քո ծննդավայրում եմ Ծաղկածոր տանող ձանապարհի վրա գտնվող այդ հրաշք գյուղում, որտեղ հիմա երկի վայրի մորի է հասել անտառում ու ջահելները հավաքված գլուխ են ուտում: Վարդավառն էլ անցավ, երանի Ջրառատում լինելի Կարդավառնի՝ Երևանից Ծաղկածոր սլացող լուպագներին գծվացնելու համար

մի լավ ջրոցի կազմակերպի: Մայքի ծայրն առանց այն էլ բարձր է, հիմա էլ որ ոգևորվել, խելոք լսող է գտել, ինչքան հնարավոր է բարձր խոսում է ու անվերջ խոսում: Ես մի տեսակ անհարմար եմ զգում, որ հանգստի ժամ է և ինքնաթիռը լեցուն է նաև օտար ազգերով: Ահա, հայրենասիրության մի այլ գեղում ևա: Վստահ եմ, որ ապրիլի 20-ից Մայքն իր մերսեդեսի վրա եռագույնը դրած, Ներսիկի երզը գլած, սև բլուզով ու մտահոգ դեմքի արտահայտությամբ վեր ու վար էր անում Գլենդելով: Բա ապրիլի 24 է գալիս, մի քիչ «տիտ-տիրիտ» չանե՞նք, ախպեր, որ սաղ էս լրբի-մոբիքը իմանան մեր գեոցիդի մասին: Մի ձև լինե՞ր սրանց բոլորին հասկացնե՞նք, որ օտար երկրում այսքան անդուր լինելը ոչ մի գուր ու կարեկցանք չի առաջացնի մեր հանդեպ: Որ մի տեսակ ամոթ է տարիներով մոկտալը, որ մեզ ջարդել, սպանել, քշել, թալանել են: Որ մեր աղջիկներին բռնաբարել են, նվաստացրել են: Ախր սա ինչ ներկայացնելու բան է: Կիսատ-պռատ անգլեբենով՝ բա. «Յու նուր վաթ հավընդ նայնթին ֆիֆթին թուրքիշ փիլիզը քիլ արմենիանս»: Հա, էղել է, բայց մի րոպե մտածենք՝ ի՞նչ է փոխում մեքսիկ, ֆիլիպին, կորեացի, ամերիկացի, սևամորթ լուսեցիների տեղեկացված լինելը, բացի նրանից, որ մտածում են՝ մենք ոչխարի պես կանգնել ենք դեմները, իրանք էլ մեզ նվաստացրել են: Կամ որքանով է մեր դաստիարակությանն ու քաղաքակրթությանը վայել քնած մարդկանց մեջ Մայքի այս բարձր խոսքը: Այո՛, հայրենասիրությունն էլ տարբեր մարդկանց մոտ տարբեր դրսևորում ունի: Օտար երկրում քաղաքակիրթ ազգություն ներկայանալու համար այնքան բան կա սովորելու, Մայք ջան. ծանոթ-անծանոթի ժպտալը, թեթև, ընկերական բարևը, հերթ կանգնելը, ցածր ձայնով խոսելը, ամեն առավոտ լողացած աշխատանքի գնալը, փողոցում մերոնցից էլ չկան հա՞... լավ էլի, շատ մի գարգացեք: Հայաստանում ապրող մեր հարազատության ծայրն «չգլելը», լավ մեքենան ցուցադրելու համար չարչարվելով չքշելը կամ խանութում կանգնած ես հերթի մեջ ու մեկ էլ մի հայ պապիկ:
- Աղջիկ ջան, իրան ասա, թող ինը հաշվի, ես գնամ:
- Զէ՛, ամոթ է, սպասեք մի քիչ, ես չեմ ասի,- ու միանգամից.
- Սքյուզմի, փլիզ, փլիզ, յա օչեն թիստոր, փլիզ, մայ մանի, յա գոու...
Ու ականայից մտածում եմ, որ էս պապիկը դժվար թե վիրաբույժ լինի, որ պիտի հիմա վագի ու մոտոցիկլետի վթարից վիրավորված վարորդի ուղեղ հետ հավաքի: Ու՛ր ես շտապում, ա՛յ մարդ: Ինչու՞ ես մեզ ամաչեցնում, ախր էդ Մեյլի վարկում նարդի խաղալու համար... Հայրենասիրությունն սկսվում է դաստիարակված հասարակությունից: Իսկ մենք դեռ էլեմենտներն ենք անցնում:
«Չեր մտահոգությունները հայտնեք Հակոբ Զոփուրյանին, բայց ի՞նչ Զոփուրյան, Ստեփանն է կարծես, Փարթամյան Ստեփանը ու ինչ-որ երակներ է

բուժում 10 րոպեում: Ու դեռ հետո էլ եռագույն դրոշով թրջոցներ է դնում հիվանդների կրծքերին և ինչպե՞ս մինչև հիմա չեմ իմացել, որ Ստեփանը բժիշկ է ու բուժում է ամեն-ամեն հիվանդություն, իսկ Փայամ Շահանին և Գուգուչը և Միլաձեն: Գրիգորի Եսայանը, ոնց եմ քեզ սիրում, ոնց եմ քեզ սիրում՝ երգելով, թռուցիկներ են բաժանում անցորդներին ու Ստեփանը էլի, թրջոցները ձեռքին ուզում է ազգ բուժել, իսկ հեռվից եռագույն ներկած մորուքով Հարութն է՛ ձախը, որ անվերջ կրկնում է ու կրկնում. «է՛լ չենք լինի մենք քսան տարեկան...»: Երզը մտքումս արթնանում եմ ու սուրճի քաղցից ուղղակի բարկացած՝ կանչում ուղեկցորդուհուն.
- Աչքս վախեցավ էս մարդու խոսալուց, ասում է՛ շուկայից առած միս չուտես, ջրից զգույշ էղիր, բաթով խմի, տաքսիստները, որ տուրիստ են տեսնում շատ են չարք անում...
- Հայկո՛, Հայկո՛, Հայկո՛, ախր դու կամ ես ի՞նչ տուրիստ, էս ի՞նչ բան է, տուրիստն էն մարդն է, որ կյանքում Լոսում շորտիկ չհագած՝ հասավ Հայաստան թե չէ, մտնում է շորտիկի մեջ: Կյանքում գլխարկ չդրած՝ գլխարկ է դնում ու ամեն րոպե... Օ՛ մայ գա՛ր, մի հատ սրանց քշելը նայեք, մի հատ սրանց հազածը նայեք, մի հատ սրանց տները նայեք է՛ ինչ է անում: Ես ու դու ի՞նչ տուրիստ: Մենք տուն ենք գնում ու հենց հասանք, առաջին նստարանին փռվելու եմ, կոշիկներս աջուձախ շարտեմ ու գոռամ՝ տնից լավ տեղ չկա՞... Չնայած եղբայրս մի խորհուրդ է տվել, ուզում եմ փորձել: Ասում է, որ հասնե՞մ Զվարթնոցից մինչև հյուրանոց աչքերդ փակ գնա, մտի սենյակը ու շուտ քնի: Առավոտյան առանց կողքերդ նայելու դուրս արի ու նայի շուրջը, քուր, այս 26 տարին մի վայրկյանում կանհետանա: Կթվա՛ երբեք էլ չես հեռացել, ուղղակի վատ երագի պես ջրին պատմի, թող գնա: Ափորձե՛մ, Հայկո: Ընկերուհիդ որտե՞ղ է ապրում, ուզո՞ւմ ես միասին գնանք աղջիկ ուզելու:
- Արմավիր ասեց, ի՞նչ ասեց, հա ոնց որ Արմավիր էր:
- Հայկո, հոկտեմբերյանից աղջիկները շատ սիրուն են հա, ում հանդիպել եմ, դեմքից արդեն իմացել եմ՝ հոկտեմբերյանի է: Խաժոտ աչքերով, մուգ մաշկով, քիթիկներին էլ մանր պեպեններ: Բախտող երեխ է, հավաքում:
- Իիիի՛, տեսե՛լ ես Շուշանին, հենց ինքն է, որ կա,- ծօծաղում է,- կարո՞ղ է շատ լինի իրանից, չտարբերեմ:
- Զէ՛, չէ՛, դու տես, որ հանկարծ բարեկամ դուրս չգաք, մի բուռ հայ ենք:
Մի բուռ հայ ենք, կառչում եմ մտքիցս ու «քիչ ենք, բայց հայ ենք» պտտեցնելով՝ սկսում Սևակի հետ հավասարի պես կռիվ անել. «Տես, Պարո՛ւյր, չկարծես, թե մեղքդ չկա, որ մենք այսպես մեծացանք: Դու չի՞ր, որ տարբերում էիր պաչը համբույրից, մեզը՝ մշուշից ու մահացունը՝ մեռնելուց, եղբայր: Դե հիմա ասա, ես է՛մ պահը չէ՛, որ ինքս շատ եմ ինձ նման ու տարբերում եմ ապրելը սպասելուց»:
ejournal.am

Սկզբը՝ NN 1-2, 3-4, 5-6-ում

ՄԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿՈՐԱԾ ՆԱՅԵՐԻ ՆԵՏՔԵՐՈՎ
ՃԱՆԱԳՐՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԻՆ ԱՍԻԱ. 1984թ.

ԱՍՏՎԱԾ ՄԻ ԴՈՒՌ ՓԱԿՈՒՄ Է, ՄԻ ԴՈՒՌ՝
ԲԱՅՈՒՄ, ԿԱՄ՝ ԸՆԴՀԱԿԱՌԱԿԸ

Երևանում՝ Կույրերի միավորման մշակույթի տանը, համալսարանի ամենաբարձր հավաքների մասնակիցներին պատմում են իմ ճանապարհորդության մասին: Հույս ունենալով, որ Արևմտահայից ու Կրասնոդարի երկրամասից Հայաստանում վերաբնակված քրիստոնյա համայնությունները, նաև Երևանի տարիներին Տրապիզոնի նահանգից այլ երկրներում ապաստանածների և Հայաստան ներգաղթածների սերունդները, որոնց մեջ շատ են հայրենասեր մարդիկ, ինձ կօգնեն: Նրանց՝ Կույրերի միավորման նախագահ Արեվ Հակոբյանին, ՀՀ վաստակավոր արտիստ Մայիս Դարայանին, գինեգործ գիտնականներ, կենսաբ. գիտ. դոկտոր Միսակ Մելքոնյանին և գյուղ. գիտ. թեկնածու Ռեդա Անասյանին, ՆԳ պահեստի մայր Միխայիլ Միսայանին, սրտաբան Ալեքսան Կալայանյանին, Հայկոսի աշխատակից Գրիգոր Գունդակչյանին, լրագրող Կառլ Յալանուզյանին, քեմստիկ հար Նշան Ֆերմանյանին, մատենագետ Սաթենիկ Պետրոսյանին, Ջրային պաշարների օգտագործման և պահպանության պետկոմի աշխատակից Ասյա Խաչատրյանին, իրավաբան Անդրանիկ Քեչիշյանին, փիլ. գիտ. դոկտոր, պրոֆ. Կարապետ Բոստանջյանին, գինվորական, մայր Անդրանիկ Մաթևոսյանին, երգիչ Ավետիս Քյոստյանին, մյուսներին պատմում են տեսած-լսածս: Քանիցս հավաքվում ենք, քննարկում մեր անելիքը: Ճշտում ենք՝ ովքե՞ր են օդանավակայանում դիմավորելու, ո՞ր ենք տանելու, որտե՞ղ ենք հյուրասիրելու, որտե՞ղ է մեր համայնությունից պարտավորված նրանց հետ շուրջպար բռնելու և նման բազմաթիվ մեծ ու փոքր հարցեր: Անշուշտ, հյուրերի հետ բոլորը պետք է խոսեն Համայնի բարբառով:

Հայաստանում նրանց բնակեցման վայրերի ընտրության համար տարբեր առաջարկներ են լինում: Ես ցանկանում եմ, որ առաջինը տանենք Կալինինոյի (Տաշիր), Ստեփանավանի, Գուգարքի շրջանների մոլորակների, ռուսների և ուկրաինացիների բազմազգ գյուղերը, որոնք անասնապահության և գյուղատնտեսության համար հրաշալի, գեղատեսիլ վայրեր էին: Իմ առաջարկն ընդունվում է:

Ես 1978-1980 թթ. աշխատել էի Ստեփանի և կաթնեղենի արդյունաբերության նախարար Ստեփան Վարդանյանի օգնական, և նրա հետ եղել էի Հայաստանի տարբեր շրջաններում,

ուստի ծանոթ էի այդ կողմերին: Ասեմ, որ Կալինինոյի (Տաշիր) պանրագործարանը տալիս էր ամբողջ ԽՍՀՄ-ում արտադրվող շվեյցարական պանրի մեկ երրորդը: Կիրովական (Վանաձոր) քաղաքն էլ, որ ուներ հարյուր հազարից ավելի բնակչություն, շատ մոտիկ էր:

Մի կարևոր հանգամանք էլ կար. Դրղաստանում և Ղազախստանում համայնությունների մեծ մասի երեխաները ռուսական դպրոցներ էին հաճախում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ բնակավայրերում ռուսական չկար: Այս գյուղերում նրանք կարող էին մի քանի տարի իրենց կրթությունը շարունակել տեղի ռուսական դպրոցներում, մինչև որ քիչ թե շատ գրական հայերեն խոսել, հայերեն գրել-կարդալ կսովորեին: Նաև Աջարիան այդտեղից ավելի մոտ էր, կարող էին երբեմն այցելել իրենց հայրենի գյուղերը:

Բնակատեղիի ընտրությունից հետո մենք պետք է դիմեինք ՀԿԿ Կենտկոմ և Նախարարների խորհուրդ:

Խնդիրն այն էր, որ Դրղաստանում և Ղազախստանում ինձ ասում էին, որ իրենք ցանկանում են Հայաստան տեղափոխվել իրենց գյուղական համայնություններով, որպեսզի ծնողներն ու առանձին ընտանիքներ կազմած զավակները, քույրերն ու եղբայրները, ազգականներն իրարից չբաժանվեն: Իսկ այդ դեպքում, այլազգի համապարտագրությունները, իմանալով, որ խեղճները մեկնում են, շատ ցածր գին կտան նրանց տներին ու գույքին, այգիներին ու ընտանի կենդանիներին: Իսկ այդ ամենը նրանք վաստակել են 40 տարեկա տքնաջան աշխատանքով, անասնի զրկանքների ենթարկվելով: Այլ հարստություն նրանք չունեին, իսկ Հայաստանում նոր տունտեղ հիմնելու, կենդանիներ գնելու համար զգալի գումարներ էին պետք: Ուստի առաջարկում էին, որ Հայաստանի ղեկավարության միջնորդությամբ, Դրղաստանի և Ղազախստանի իշխանությունները գնեն իրենց ունեցվածքը կամ միջպետական պայմանավորվածությամբ իրենց ունեցվածքն այնտեղ հանձնեն իշխանություններին, Հայաստանում համարժեքը ստանան, ի վերջո, բոլորն ապրում են մեկ պետության մեջ՝ ԽՍՀՄ-ում: Մի խոսքով, պետական աջակցություն է պետք:

Մենք կազմը պատրաստ սպասում ենք, բայց հյուրերը չկան: Նամակ են գրում Սուլեյման Սալեհովին: Պատասխան չկա: Օրերն անցնում են: Ջան-

գահարում են Հաբիբին: Տեղեկացնում է, որ Սուլեյման Սալեհովին լեռներում է, հենց իջնի, նրանից կիմանա, թե երբ է գալու, ինքն էլ նրանց հետ կգա, ինչպես որ պայմանավորվել ենք:

Որոշում են այդ ընթացքում ձեռքերս ծալած չնստել: Աղվերում բնակվող գրող, երկարամյա մանկավարժ, թոշակառու Անդրանիկ Ջեթյունյանի՝ և Ար-

Արխագիայում շրջագայելուց հետո հասնում ենք Սոչիի ու Տուրքմենի, Մայկոսի ու Կրասնոդարի շրջակա գյուղերը, վերադառնում ծովի ափ, գնում Նովոռոսիյսկ ու Անապա՝ Հայկաձոր, վերադառնում Աղվեր: Այդ ընթացքում շուրջ 100 ընտանիք ցուցակագրվում է: Եթե ավելի շատ բնակավայրեր այցելեինք, կամ գյուղերում մի քիչ

ընդամենը 2-3 ամիս առաջ են Դրղաստանում եղել: Ծնվել է 1914 թ. Գոնիոյում, 1944 թ., երբ եղբայրներն ու հորեղբոր տղաները ռազմաճակատում էին, նրանց ընտանիքներն աքսորել են Դրղաստան՝ Օշի մարզ, Ուչ-Կորգոն գյուղ: Գոնիոյում երկհարկանի տուն ունեին, իրենց ընտանիքը 15 հոգի էր, աքսորի ժամանակ երկուսը մահացան՝ Արթուրյան՝ 20 տարեկան, և Էմիլյան՝ 8 տարեկան: Ուչ-Կորգոնում անասնաբուծությամբ է զբաղվել: Այնտեղ էլ է երկհարկանի տուն կառուցել, բայց 1983 թ. մարտին տեղափոխվել է Երիկ գյուղ: Մեծ տուն չի, վեց հազար ռուբլով է գնել, հիմա ընդարձակում է, ամրացնում, 3000 քմ հող ունի: Առաջինը բանը, որ արել է, բակում մեծ թախտ՝ սավթի է պատրաստել, որի վրա էլ նստում, գրուցում ենք: Ընտանիքը 11 հոգի է: Երեք աղջիկներն ամուսնացել են, գնացել, մեծ տղան՝ Էմվերը, 42 տարեկան է, վարորդ է, 6 երեխա ունի: Մյուս տղան սովորում է 10-րդ դասարանում: Քաղին արդեն թոշակառու է, ասում է. «Աշխարհս մըթնա գու, լուսանա գու, մարթե հալիվորնա գու» (Աշխարհը մթնում է, լուսանում է, մարդը ծերանում է): Թեև իրեն հայ է համարում, բայց անձնագրում գրված է «թուրք»: 1978 թ. այցելել է Թուրքիա, Խոփայում շատ ազգականներ ունի:

Պատմում են, որ Ուչ-Կորգոնից պիտի Սուլեյման Սալեհովին եղբոր հետ Երևան գա: Ասում է, որ ջուրն ընկած մարդը մի քանից պիտի բռնվի, ու ձեռքը գցում է, բռնում է կողքին դրված գերանը: Ճիշտ է, համայնություններն այլևս ծովն ընկածների նման են, արդյոք կկարողանա՞նք նրանց օգնել: Չենք ուզում Քաղինին խանգարել, մարդիկ շինարարությամբ են զբաղված, որոշում ենք շարունակել մեր ճանապարհորդությունը: Նա իր փոքրիկ թռչունուհու ձեռքը բռնած մեզ ուղեկցում է փողոց, այնտեղ հրաժեշտ ենք տալիս:

Գնում ենք Կիմ գյուղ: Բիբլիոտեկային փողոցում՝ մի տան մոտ, շինանյութ է թափված, մարդիկ բախով ավազ են խառնում: Տանտեղը՝ Շուքրի Ֆեյզովին, հիսունի մոտ տղամարդ է, Կզըլ-Կիյայից է, 1982 թ. դեկտեմբերին է տեղափոխվել: Կզըլ-Կիյայում ապրել է Սպորտիվնայա փողոցում: Ասում են, որ նույն փողոցում էր ապրում նաև Դուրյան Բարաբաջյանը, վերջերս են այնտեղ եղել: Անշուշտ, ճանաչում է: Շուքրին տասը երեխա ունի, հինգ տղա և հինգ աղջիկ, վեց թռչ: Այս տունը ութուկես հազար ռուբլով է արել, 2500 քմ հող ունի: Կիմում ևս 9-10 տուն համայնություն կան՝ Բարաբաջիովիներ, Թաթա-



Ս. Վարդանյանը Ս. Խանգաղյանի առանձնատանը, 1978 թ.

խագիայի Լեսելիձե գյուղում բնակվող բանաստեղծ, հայկական դպրոցի տնօրեն Մանաս Դեմիրճյանի² հետ, նրա մեքենայով հուլիսին ճանապարհվում ենք Արխագիայի և Կրասնոդարի երկրամասի քրիստոնյա համայնախմբի մոտ:

Նախորդ ճանապարհորդությունների ընթացքում, տարբեր գյուղերի հայերը, մանավանդ նրանք, ովքեր մտահոգ էին իրենց զավակների ազգային դաստիարակությամբ, ինձ ասում էին, որ եթե պետական աջակցություն չլինի, իրենք սիրով կտեղափոխվեն Հայաստան: Հիմա, երբ Դրղաստանից և Ղազախստանից վերաբնակեցման հարց պիտի բարձրացվի, մտածում էի՝ լավ կլինե՞ր, եթե քրիստոնյա և մահմեդական համայնություններին միասին բնակեցնեինք. նույն բարբառով խոսողների հետ ապրելով, մահմեդական համայնությունները Հայաստանում իրենց խորթ չէին զգա:

¹ Անդրանիկ Ջեթյունյան (1916, Սոչի, Լազարևսկի շրջ., գ. Վ. Բուրու-1986, Աղվեր), գրող, բանաստեղծ, հասարակական գործիչ, Արխագիայում և Կրասնոդարի երկրամասում աշխատել է մանկավարժ, հայկական դպրոցների տնօրեն, ժողովրդաբանի տեսուչ: Կազմել է «Չայն համաշխարհային» ժողովածուի երկրորդ հատորը (1979):
² Մանաս Դեմիրճյան (1924, Արխագիա, Գագրայի շրջ., գ. Միկելիվիշ-2-2006, Աղվեր), բանաստեղծ, մանկավարժ, տնօրեն է աշխատել Գագրայի (Գագրիվիշ) շրջանի Լեսելիձե (1992-ից՝ Գեչրիվիշ) գյուղի թիվ 2 (այժմ՝ Լապատարիայի թիվ 1) հայկական դպրոցում: Գրական անունը՝ Հայ-Սորենց:

րողիններ, Քյուսոլլիններ: Իր անձնագրում «խեմշիլ» է գրված: Հայաստան գալու մասին ասում է՝ շուտ ասեիք, հիմա իրեն այստեղ լավ է գգում:

Գնում ենք Բելոռեսյենսկի շրջան, այնտեղ և մի քանի գյուղերում Պշեխսկայայում, Իվանովսկայայում, Յուսուխի Սովխոզում, վերաբնակված խեմշիլներ կան: Պշեխսկայա ստանիցայում հանդիպում ենք Դուրսուն Բեշիկին (Բեշիկոլի), արդեն ինը տարի է, ինչ ապրում է այստեղ, Ղազախստանի Ջամբուլի մարզից է:

Ասլան Բեշիկոլլին էլ ծնվել է Աջարիայում Քոբուլթեում, 1944 թ. աքսորվել է: Պատմում են, որ Բեշիկոլլինների հանդիպել են, նրանց մասին ասում են, որ «համշենցի քուրդ» են:

- Ես բաշ-համշենցի եմ խեմշիլ եմ, ես քուրդ չեմ,-ասում է նա,- բռնեցին աքսորի ժամանակ «քուրդ» գրեցին:

Ղրղզստանում՝ Ուչ-Կորգոն գյուղախմբի Վալակըզ գյուղում հովիվ է եղել, Ջամբուլի մարզում է ապրել, 1981 թ. եկել է Պշեխսկայա, չորս տղա և չորս աղջիկ ունի: Իր տունն ինը հազարով է առել: Ջամբուլից էլի երեք տուն իր ազգականներից կան այս գյուղում՝ Մուհամմեդ, Հուսեյն և Իսքանդար Բեշիկոլլինները:

Պշեխսկայա ստանիցայի Սարովայա փողոցում հանդիպում ենք Սարիե Քարաիբրահիմովային և Չիրկինոյից տեղափոխված և մի քանի կնոջ, ովքեր ասում են, որ այստեղ տասը տուն Քարաիբրահիմովներ կան, չորս տուն՝ Չիրկինոյից, վեց տուն՝ Ղրղզստանից: Նրանց ցույց են տալիս Չիրկինոյում իմ արած լուսանկարները, շատ են հուզվում: Սարիեյն հատ-հատ համբուրում է լուսանկարները, աչքերից արցունք է գալիս: Խնդրում է լուսանկարներն իրեն տամ: Տալիս են:

Պշեխսկայայի խանութում գրուցում ենք վաճառողուհի Ամայա Չալայանի հետ: Նա 19 տարեկան է: Հարցնում են՝ Մայկուպի խուլ անտառներում գտնվող Տուբի գյուղում բնակվող զուռնաչի Բորիս Չալայանն իր իմն է, զարմանում է, որ ճանաչում են, պարզվում է, որ հորերջայրն է: Ամայայից հետաքրքրվում են, թե ինչպես են իրենք՝ քրիստոնյա համշենցիները, վերաբերում նոր եկած խեմշիլներին: Ասում է, որ իր ամենամոտիկ ընկերուհին՝ Նիզաֆետ Քարաիբրահիմովան, խեմշիլ է, հիմա կգա խանութ: Եվ իրոք, շուտով գալիս է Նիզաֆետը, որը սովորում է Մայկուպի թեթև արդյունաբերության տեխնիկումում, դերձակ պիտի դառնա: Ինքն ու Ամայան շատ են ուզում հայերեն տառերը սովորել, փորձել են, բայց օգնող չկա: Երկուսն էլ երազում են ընդունվել Երևանի ժողովուրդների ինստիտուտի առարի էկոնոմիկայի և ապրանքագիտության ֆակուլտետ: Բայց առանց մեկը մյուսի չեն գա սովորելու: Տեղում որոշում ենք՝ քանի որ Ադլերում, ընդհանրապես, տարածաշրջանում հայերեն գրամեթե-

նա չկա, ուստի ես Երևանում Անդրանիկ Ջեթուկյանի անունից դիմում կգրեմ ՀԽՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարար Կյուրվիզ Ղարիբջանյանին, կխնդրեմ, որ բացառության կարգով աջակցի նրանց, նաև կրոնավիտս համշենցիների այլ երեխաների (Ես դիմումը գրում եմ, բայց հարցը չի լուծվում, քանի որ արտամրցության տեղեր կարող էին հատկացվել միայն մանկավարժական բուհերի համար):

Երևան վերադարձից հետո պարզվում է, որ դեռ Սալեհոլուց նամակ չկա, գանգախարում են Ղրղզստան:

Վերջապես Ղրղզստանի ժամանակներին տեղեկանում են, որ լեռներում ոչխարներ արածացնելիս հսկայական խոյն իր ծանր, պտուտակած եղջյուրներով ուժեղ հարվածել է Սուլեյման Սալեհոլու կրծքավանդակին՝ ջարդել: Նա տուն է եկել, պառկել է ու մահացել:

Բոլորս շատ ենք ցավում, հատկապես ես, որ անձամբ ճանաչում էի նրան:

Երբ կորած համշենահայերի հետքերով 1984 թ. ապրիլին մեկնում էի Ղրղզստան և Ղազախստան, չգիտեի, որ Սոչիում բնակվող ազգագրագետ Բարունակ Թռչալայանը՝ 1967 թ. դեկտեմբերին Բաթումում պատահաբար հանդիպել է իրենց գյուղերը վերադառնալու հարցով Միջին Ասիայից եկած համշենցիների: Նրանց հետ պայմանավորվել է, որ Հայաստանում վերաբնակվելու հնարավորություններն ուսումնասիրելու համար պատվիրակ ուղարկեն Երևան: 1968 թ. պատվիրակը եկել է, նշանավոր արձակագիր Սերո Խանգադյանը՝ շատ ջանքեր է գործադրել, բայց այլևայլ պատճառներով խնդիրը չի լուծվել: Այդ ամենի մասին ոչինչ չէր հրապարակվել:

1971թ. Սերո Խանգադյանն իր կազմած և խմբագրած «Չայն համշենական» ժողովածուում՝ «Համշենցի հայերի մոտ» ընդարձակ ուղեգրության մեջ, որում պատմում է Կրասնոդարի երկրամաս և Աբխազիա կատարած ճանապարհորդության մասին, ընդամենը մեկ պարբերության մեջ անդրադառնում է նաև Բաթումի մոտակայքում՝ թուրք-խորհրդային սահմանի մոտ

բնակված մահմեդական հայերին. «Մահմեդական հայերի մի մասն էլ, որոնք իրենց թուրք չէին համարում, այլ համշենցի, բնակվում էին թուրք-սովետական սահմանից այս կողմ, Բաթումի շրջակա լեռներում: Դրանցից էին Կոնիա, Բերա, Թուրակ և այլ գյուղերը: Սրանք հմուտ ծխախոտագործներ ու թեյագործներ էին՝ հայկական նիստ ու կացով, հայերեն խոսող, ապրող»⁵: Նա նույն էջում ծանոթագրում է. «Նրանց անձնագրերի «ազգություն» հարցի դիմաց գրված է Համշենցի»: Ինչպես տեսնում ենք, ոչինչ չի ասվում 1944 թ. աքսորի մասին: Գուցե պատճառը խորհրդային գրաքննությունն է եղել:



Մշակույթի նախ. ժողատեղծագործության գիտամեթոդական կենտրոնում, ծախսից՝ Անդրանիկ Քեշիշյան, Միխայիլ Մինայան, Ջելալ Քարաիբրահիմով, Կառլ Յալանուզյան, Վաղիմիր Էքսուզյան, Այա Խաչատրյան, Գրիգոր Գունդակչյան, Քազիմ Քարաիբրահիմով, Անդրանիկ Մաթոլյան, կենտրոնի տնօրեն Մուսայել Գալոյան, Մելիք Ավետիսյան, Մայիս Ղարաբաղյան, Գեղամ Սնայան, Սերգեյ Վարդանյան, 1984 թ., դեկտեմբեր

Աջարիայի կրոնավիտս համշենցիների աքսորի մասին ոչ մի խոսք չկա նաև ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի 1981 թ. հրատարակած Բարունակ Թռչալայանի «Համշենահայերի ազգագրությունը» գրքում, թեև հեղինակը հատ-հատ շատ համառոտ անդրադառնում է նրանց 5 գյուղերին (Գըզըլ-թուրքաբ, Չարնալի կամ Ճառնալ, Գոնիո, Կորիաթ, Ավթա), և նույնիսկ տպավորությունն այնպիսին է, թե համշենցիները դեռ շարունակում են ապրել այդ գյուղերում⁶: Կրկին՝ գրաքննությունն է պատճառը: Չգիտեմ, չեմ կարող ասել:

Միջին Ասիայից վերադարձից հետո, երբ պատրաստվում էինք ընդունել հյուրերին, ես որոշ բաներ իմացա և Կրասնոդարի երկրամասում ճանապարհորդության ընթացքում Սոչիում այցելեցի Բարունակ Թռչալայանին: Ասաց, որ դժգոհ է գրքի կրճատումներից և տպագրության ձգձգումներից: Նրան պատմեցի Ղրղզստանի և Ղազախստանի համշենցիների հետ պայմանավորվածությունների մասին, ասացի, որ ցանկանում եմ կրոնավիտս համշենցիներին նվիրված ուսումնասիրություն գրել: Նա օգտագործելու նպատակով ինձ տվեց նրանց և Սերո Խանգադյանին

իր գրած նամակների կրկնօրինակները: Երևանում ես խոսեցի նաև Սերո Խանգադյանի հետ, ում ծանոթ էի դեռ 1978 թ-ից, երբ աշխատում էի «Պիոներ կանչ» («Կանչ») թերթում: Նրան պատմեցի իմ ուղևորության մասին: Այնուհետև, երբ 1984 թ. դեկտեմբերի 12-ին Ղազախստանից անակնկալ եկան Ջելալ Քարաիբրահիմովն ու Քազիմ Քարաիբրահիմովը, ես նրանց ծանոթացրեցի Ս. Խանգադյանի հետ և նա մեզ շատ օգնեց: Մանավանդ որ մենք անպատրաստ էինք:

Բայց ամեն ինչ հերթով: Ուրեմն, դեկտեմբերի 12-ի աղանամուրին՝ առավոտյան ժամը 6.30-ի կողմերը, ինձ գանգախարեց Ջելալը և ասաց, որ Քազիմի

հետ Երևանի օդանավակայանում են: Դժվար է նկարագրել այն ցնցումը, որ ես ապրեցի: Մենք նրանց սպասում էինք գարնանը կամ ամռանը, այս ծյուն ձմեռով ո՞ւր պիտի տանեք: Շտապ գնում եմ, բերում մեր տուն: Պարզվում է, որ սուխուլուցի լուսանկարիչ Վովա Յալայանը որոշել է զբաղվել Ղրղզստանի համշենցիներին Հայաստանում վերաբնակեցնելու հարցերով: Ինչ-որ մեկը գումար է տվել, և նա մեկնել է Կըզլ-Կիյա: Հաբիբ Քոչանիձեն մերժել է գալ Երևան, ասելով, որ Ջելալի հետ պայմանավորվել են դպրոցականների գարնանային կամ ամռանային արձակուրդների օրերին գնալ: Վովան ասել է, որ այդ ամիսներին ինքը խիստ զբաղված է, միայն ձմռանն է ազատ: Իմանալով Ջելալի հասցեն, մեկնել է Ղազախստան, Ջելալին ու Քազիմին ասել, որ Հայաստանում նրանց են սպասում: Գյուղացիներից ստորագրություններ են հավաքել, եկել են Տաշքենդ, բայց այնտեղ իրար կորցրել են: Էլ հետ չեն գնացել, թեև են Երևան:

Ինչևէ: Ջանգախարեցի Սերո Խանգադյանին: Գնացինք Նորքի նրա տուն, որտեղ քանիցս եղել էի: Չորուցեցինք, հյուրերն ասացին, որ հինգ օրով են եկել: Ս. Խանգադյանը հիշեց, թե ինչպես են տարիներ առաջ կրկին փորձել Ղրղզստանից համշենցիների բերել Հայաստան: Այնուհետև Ջելալին ու Քազիմին տեղավորեցինք «Անի» հյուրանոցում: Երևանում բնակվող համշենցիների հետ երեկոյան հյուրանոցի ռեստորանում կազմակերպեցինք ջերմ հանդիպում: Վերջապես, ինչպես ասում են, Ջելալի ու Քազիմի երեսների գույնը բացվեց, նրանք հայտնվել էին հարազատ միջավայրում, ուր բոլորը խոսում էին Համշենցի բարբառով:

Հանդիպման ավարտին անակնկալ հայտնվեց Վովան, և շուտով պարզվեց, որ նրա և այստեղի համշենահայերի միջև տարիներ տևած հակամարտություն կա: Նրան մեղադրեցին, որ միշտ շրջանցում է Հայաստանում բնակվող համշենահայերին և այժմ էլ, տուրք տալով փառասիրությանը, փորձել է նրանցից առաջ ընկնելով, Հայաստան բերել կրոնավիտս համշենցիներին, այնինչ իրենք այդ ամենը նախատեսել են եղանակների տաքանալուց հետո: Ասում էին՝ եթե հայրենասեր ես, նախ ինքդ արի, Հայաստանում ապրիր, հետո ուրիշներին առաջարկիր:

Իսկապես, վտանգվել էր կարևոր նախաձեռնությունը, որի մասին ես էի Վովային պատմել մայիսին, երբ Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի կազմակերպած ազգագրական երգի-պարի փառատոնին բերել էր Մայկուպի շրջանի Ցվետոչնի գյուղի ջնկիցիների «Ջնիկ» և Պրոլետարսկի գյուղի տրապիզոնցիների «Թրթուկ» պարախմբերը: Անշուշտ, ցավալի է, որ ազգային կարևոր ծրագրեր իրագործելու ժամանակ ծագում են անձնական մանր ու մեծ խնդիրներ ու շահագրգռություններ, որոնք, ի վերջո, ծախսում են բոլորի համար ցանկալի գործը: Բայց այդ ամենի մասին այստեղ չեմ պատմի:

Հաջորդ օրերին Կույրերի միավորման մշակույթի տան դահլիճում Ջելալն ու Քազիմը ծանոթացան բազմաթիվ համշենահայերի հետ, կրկին գրուցեցին բարբառով, դիտեցին մեր պարախմբի շուրջպարերը, եղան Մատենադարանում, ժողովրդական երգերի հայտնի հավաքող և կատարող Հայրիկ Մուրադյանի տանը, մեր տանը, Մշակույթի նախարարության ժողատեղծագործության գիտամեթոդական կենտրոնում, որտեղ 1980 թ. ստեղծվել էր հայաստանաբնակ համշենահայերի «Համշեն» ակումբը, որի դեկավարը Միխայիլ Մինայանն էր, հանդիպեցին ակումբի անդամներին: (Ի դեպ, Միխայիլ

Միխայիլ (Միքայել) Մինայան (1913, Տրապիզոնի նախ., Օրդուի գավ. - 1992, Երևան), 1913 թ. ծնողների հետ տեղափոխվել է Աբխազիայի հայկ. Ութարայոյ գյուղ: Աշխատել է Գագրայի շրջ-խորհրդի նախագահի տեղակալ, ԴՍԱԱՀ-ի նախագահ: 1945-ից բնակվել է Երևանում, 1970 թ. կենսաբանական է անցել ՆԳ մայրի կոչումով: Համշենահայության մասին մի քանի գիտական հոդվածների հեղինակ է, 1990 թ. հրատարակել է «Ան ծովի առախնյա շրջանի հայերը» ռուս. գիրքը:

⁵ Միխայիլ (Միքայել) Մինայան (1913, Տրապիզոնի նախ., Օրդուի գավ. - 1992, Երևան), 1913 թ. ծնողների հետ տեղափոխվել է Աբխազիայի հայկ. Ութարայոյ գյուղ: Աշխատել է Գագրայի շրջ-խորհրդի նախագահի տեղակալ, ԴՍԱԱՀ-ի նախագահ: 1945-ից բնակվել է Երևանում, 1970 թ. կենսաբանական է անցել ՆԳ մայրի կոչումով: Համշենահայության մասին մի քանի գիտական հոդվածների հեղինակ է, 1990 թ. հրատարակել է «Ան ծովի առախնյա շրջանի հայերը» ռուս. գիրքը:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

³ Բարունակ Թռչալայան (1899, Տրապիզոնի գավ. գ. Կյուշանա - 1987, Սոչի), 1918-ից ապրում էր Սոչի քաղաքում: Եղել է մանկավարժ, ծխախոտագործ և այլն: Գրել է «Համշենահայերի ազգագրությունը» (1981) գիրքը, ժողովել, կազմել և ծանոթագրել է «Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության» ժողովածուն (1986): Համշենահայությունը նվիրված մի շարք հոդվածների հեղինակ է:

⁴ Սերո Խանգադյան (1915, Գորիս-1998, Երևան), նշանավոր արձակագիր, Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ (1972), Պետական մրցանակի դափնեկիր (1977), ԽՍՀՄ Սոցիալիստական աշխատանքի հերոս (1984), Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր (1980-85, 1985-90), ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր (1989-91):

⁵ Չայն համշենական, ժողովածու, կազմեց և խմբագրեց Սերո Խանգադյանը, Երևան, 1971, էջ 11:

⁶ Բ. Թռչալայան, Համշենահայերի ազգագրությունը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 13, Երևան, 1981, էջ 30:

ՄԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿՈՐԱԾ ՆԱՅԵՐԻ ՆԵՏՔԵՐՈՎ

(Սկիզբը՝ 4-5-րդ էջերում)

ՃԱՆԱՊԱՐՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԻՆ ԱՍԻԱ. 1984թ.

Մինսկյանի նախածեռնությանը հայաստանաբնակ համշենահայությունը 1967 թ-ից պարբերաբար հավաքվում էր, իսկ տոնական առիթներով խնջույքներին (մարտի 8 և այլն), մասնակիցների թիվը հասնում էր մի քանի հարյուրի, հյուրեր էին գալիս նաև Կրասնոդարի երկրամասից և Աբխազիայից):

Երևանում գտնվելու մի քանի օրերը շատ հազեցած էին, լավ է, որ ես չէի աշխատում և կարող էի հյուրերով զբաղվել: Հայերիս դարավոր փորձառությունը, թե չկա չարիք՝ առանց բարիք, կրկին հիշեցնել տվեց: Բանն այն է, որ «Պիոներ» («Աղբյուր») ամսագրի գլխավոր խմբագիր, սովետահայ կին գրող Անահիտ Սահինյանը, երբեմն-երբեմն աշխատանքի գալիս ինձ նույն հաճախականությանը հիշեցնում էր, որ Աբխազիայի և Կրասնոդարի երկրամասի հաշենահայերի մոտ գնալու պատճառով հուլիս ամսին մի քանի օր բացակայել եմ աշխատանքից: Անկեղծ ասած, թեթև աշխատանք էր, 10 հոգով հրատարակում էինք մի պատկեր ամսագիր, և ազատ ժամանակ շատ ունեինք, բայց պետք է խմբագրությունում գամվեինք և օր մթնացնեինք: Երբ արդեն այդ հիշեցումներն ինձ զայրացրեցին, ես դիմում գրեցի և 1984 թ. հոկտեմբերի 16-ին ազատվեցի պատասխանատու քարտուղարի պաշտոնից:

Ուրեմն, նոր աշխատանք չէի գտել, ազատ ժամանակ ունեի և կարող էի հյուրերին օգնել ծանոթանալու Հայաստանի պայմաններին: Ս. Խանգույանը զանգահարեց մի քանի շրջանների ղեկավարների, որոնք կամ տեղում չէին կամ կրոնափոխ համշենցիների մասին երբեք չէին լսել և հարցը պետք է վերադասի հետ համաձայնեցնեին: Մեղրու կուսշրջկոմի առաջին քարտուղար Ալբերտ Վարդանյանն այդ օրերին Երևանում էր: Նա առաջարկեց մեկնել Մեղրու Վահրավար գյուղ, որը շատ հարմար էր գյուղատնտեսության և անասնապահության համար, բայց, ցավոք, դատարկվում էր: Մեքենայի հարցն արագ լուծվեց: Հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեի նախագահ Ստեփան Պողոսյանը մեզ սիրով տրամադրեց «ՈԱՑ» ավտոմեքենա: Երևանից Մեղրի ճանապարհը շուրջ 370 կմ էր, համեմատաբար կարճ ճանապարհով՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքով՝ շուրջ 260 կմ էր, բայց այնտեղով գնալու համար անհրաժեշտ էր հրավեր կամ գործուղման փաստաթուղթ ունենալ, որ բնակության վայրի ՆԳ բաժինը անցաթուղթ տար:

Ալբերտ Վարդանյանի միջնորդությամբ Նախիջևանի սահմանին զինվորականներից անցագիր ստանալով գնացինք մինչև Մեղրու սահման, այնտեղ

էլ անցաթուղթ ստացանք: Այս կարգը հյուրերին դուր չեկավ, նաև այն, որ ճանապարհը տեղտեղ անցնում էր սահմանամերձ գոտով և երևում էին փշալարերն ու սահմանապահների դիտաշտարակները:

Մեղրիում հանգրվանեցինք հյուրանոցում և անմիջապես գնացինք Վահրավար, որը 6 կմ հյուսիս-արևմուտքում էր: Հին, գեղեցիկ գյուղ էր, հիշատակվում էր դեռևս 14-րդ դարում, կային 16-րդ դարից մնացած տապանաքարեր, 17-րդ դարի եկեղեցի, մի խոսքով, ավանդական հայկական գյուղ էր, որի բնակիչները, ցավոք, գնում էին Ազարակ, Մեղրի, այլ քաղաքներ: Կուլտնտեսության նախագահ Սարգիս Առաքելյանը մեզ էր սպասում: Համարյա տարեկիցներ էինք, մեկ տարի էր փոքր, ծնվել էր 1953 թ.: Հիշեցումն է, որ Երևանում, ուսանողական տարիներին ինչ-որ բախտով ծանոթացել էք: 1976 թ-ից նախագահ է: Գյուղում մի քանի տասնյակ մարդ է մնացել, ընդամենը երկու երիտասարդ կա, մեկը ինքն է, մյուսը՝ վարորդը, երեք երեխա կա, երկուսը իրենն են, մեկը՝ վարորդին: Իր մեծն էլ Ազարակում է մանկապարտեզ գնում: Գյուղում անասնապահությանը հիմնականում զբաղվում են աղբբեջանցիները: Ջելալն ու Քազիմն ասում են, որ իրենք գյուղը շատ հավանեցին, բայց, կարծում են, որ իրենց հայրենակիցները չեն ցանկանա Իրանի սահմանին ապրել:

Հաջորդ օրը ծանոթանում ենք Մեղրի քաղաքին: Երևանում ցուրտ ծմեռ է, բայց այստեղ ձյուն չկա, արև է: Գեղեցիկ բերդապարիսպներով ու եկեղեցիներով, հնաոճ տներով զարդարված այս քաղաքը, որն ընդամենը 4 հազար բնակիչ ունի, շատ են հավանում հյուրերս, մանավանդ որ այն ծովի մակերևույթից ընդամենը 605 մետր է բարձր և թուզ, նուր ու արքայանարինջ (կորոյրկ) է աճում: Գնում ենք Գեղազիտական դաստիարակության հանրապետական կենտրոնի Մեղրու մասնաճյուղ, որը մեկ տարի առաջ է բացվել: Տնօրենը՝ Ավագ Հայրապետյանը, իմ ընկերներից է, նկարիչ-դիզայներ է, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, կնոջ՝ նկարչուհի Աղել Հայրապետյանի հետ Երևանից եկել են և արդեն բավական գործ են արել, 200 երեխա են հավաքել, որոնք սովորում են նկարչության, քանդակի, ասեղնագործության, կարպետագործության, հայկական ժող. նվագարանների, պարի, թատերական և այլ խմբերում: Ջելալն ու Քազիմը շատ են հավանում այդ կենտրոնը, ասում են՝ Ի՛նչ լավ կլիներ, որ իրենց երեխաներն էլ այսպիսի կենտրոնում սովորեին: Ցավոք, տնօրենը, կինը, նաև թատերական խմբի ղեկավարը՝ մանկավարժականի իմ ուսանողական ընկերներից, ռե-

ժիսոր Գոռ Տայյանը տեղում չեն, գործով կանչել են Երևանի Գեղազիտական դաստիարակության կենտրոն, բայց Ավագ Հայրապետյանի մայրը՝ տիկին Նինան, իմանալով, որ հյուրերի հետ Մեղրիում եմ, տուն է հրավիրում և մեզ առատորեն հյուրասիրում: Ջելալն ու Քազիմը շատ զգացված են հայկական հյուրասիրությունից, նաև շատ տպավորված են, որ Հայաստանում նրանց հարազատի պես են ընդունում և կրոնափոխության մասին չեն հիշեցնում:

Վերադառնում ենք Երևան: Սերո Խանգույանն ասում է, որ Հայաստանում վերաբնակվելու խնդրանքով Չիրկինոյի 57 ընտանիքների ներկայացուցիչների ստորագրություններով դիմումը, որ Ջելալն ու Քազիմն են իրենց հետ բերել, Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորի իր միջնորդագրով պետք է հանձնենք Նախարարների խորհուրդ: Առաջարկում է հետը գնամ, եթե հարկ լինի, մանրամասներ պատմեմ, հարցերի պատասխանեմ: Գնում ենք: Կառավարության շենքի առաջին հարկում հանդերձապահ կանայք Սերո Խանգույանի վերարկուն ու մորթե գլխարկը վերցնելով, աշխուժանում են, ասում են.

- Ընկեր Խանգույան, երեկ Ձեզ հեռուստացույցով տեսանք:

Նա էլ գորիսեցու իր առոգանությամբ, ժողովրդական ասացվածքով պատասխանում է.

- Իգիթի անունը լսիր, իրան մի տես:

Այսինքն՝ քաջ կտրիճի արտաքինի մասին պատկերացումները միշտ ավելին են, քան իրականությունն է: Բոլորս ծիծաղում ենք, ու նա բարձրանում է Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Վլադիմիր Մովսիսյանի մոտ, ում հետ մտերիմ է: Ես սպասում եմ առաջին հարկում: Որոշ ժամանակ անց ինձ կանչում են ազդարարչու-նաբերության բաժնի վարիչ Հենրիկ Մկրտչյանի մոտ, որտեղ է նաև Ս. Խանգույանը: Հ. Մկրտչյանը շատ հարցեր է տալիս, հետաքրքրվում է՝ Բաղրամյանի շրջան գնացե՞լ ենք:

Հաջորդ օրը պատրաստվում ենք գնալ Բաղրամյանի շրջան: Ս. Խանգույանը ինչ-որ պաշտոնային մեքենա է խնդրել և սև «Վոլգան» առավոտյան սպասում է «Անի» հյուրանոցի դիմաց: Բաղրամյանի շրջանում նորակառույց բնակավայրեր ու ազատ տներ կան: Շրջանը մեկ տարի առաջ էր կազմավորվել Թալինի և Հոկտեմբերյանի շրջաններից առանձնացված տարածքներից, դեռ շատ անբարեկարգ էր, ճանապարհների, ջրի, գազի, էլեկտրականության հետ կապված շատ խնդիրներ կային, իսկ ծյունածածկ սարերն ու ձորերն առավել անհրապույր էին դարձնում իրականությունը: Հյուրերը Տայվորիկում, որն ընդամենը մեկ ամիս առաջ էր ան-

վանակոչվել, տեսան նորակառույց տները, բայց դեռ գյուղ դառնալու համար շատ գործ կար: Կիրակի էր և շրջանի ղեկավարությունից ոչ ոք չկար: Ջելալն ու Քազիմն ասացին, որ գուցե իրենցից մի քանի ընտանիք կգա այս գյուղում բնակվելու, բայց սկզբում պետք է իրենց ունեցվածքի փոխհատուցման հարցը սկզբունքորեն լուծվի, որից հետո իրենք կրկին կգան և շրջագայելու համար ավելի շատ ժամանակ կունենան:

Արդեն վերջին օրն էր. նրանք պետք է մեկնեին: Այդպես էլ չենք հասցնում գնալ Կալինին (Տաշիր), Ստեփանավան և Գուգարք: Ժամանակ չկա: Բացի այդ, ես ցանկանում եմ, որ այնտեղի գյուղերում լինենք բնության զարթոնքի շրջանում, տաք եղանակներին: Իսկ Բաղրամյանի շրջանում ոտքի տեղ անելուց հետո, գուցե, ավելի հեշտ կլինի Միջին Ասիայից այստեղ բերելը, նաև Հայաստանի ներսում տեղափոխություններ կատարելը:

Հյուրերը մեկնում են: Ես Ջելալի հետ նամակագրական կապ եմ պահպանում, Սերո Խանգույանի հետ էլ հաճախ եմ հեռախոսով խոսում: Համշենցիների ցավը մեզ երկուսիս հանգիստ չի տալիս:

Օրերի տաքանալուն պես խնդրում եմ իմ ընկերներից Վազգեն Մանուկյանին⁶, որը ԵՊՀ դասախոս է, և միշտ հետաքրքրվում է համշենցիների խնդիրներով, որ իր մեքենայով գնանք Բաղրամյանի շրջան, հանդիպենք կուսշրջկոմի առաջին քարտուղար Հենրիկ Մինասյանին, նրա հետ ճշտենք մի շարք մանրամասներ, պայմանավորվածություններ ձեռք բերենք: Հենրիկ Մինասյանը մեզ ջերմորեն է ընդունում, խոստանում է ամեն ինչով աջակցել համշենցիների վերաբնակեցմանը: Ասում է, որ իրենք այդ նորակառույց տները սիրով կհատկացնեն անժամկետ օգտագործման համար, բայց չեն կարող որպես սեփականություն տալ: Նրանց գույքի փոխհատուցման և բազմաթիվ այլ հարցեր իր իրավասությունից դուրս են, դրանք հանրապետության կուսակցական ղեկավարության լուծելիք խնդիրներն են:

Ես շարունակում էի ինձ հասանելի տարբեր պաշտոնյաների հետ քննարկել համշենցիների տեղափոխության հարցը, և բոլորն էլ ասում էին, որ սիրով կաջակցեն, եթե վերններում դեմ չլինեն: Օրինակ՝ Պոլիտեխնիկա-

կան ինստիտուտն առաջարկում էր, որ եթե խեղճների մեջ գրո կուրսում սովորել ցանկացողներ կան, ապա իրենք պատրաստ են նրանց հանրակացարանով ապահովել և այլն: Տարբեր բնագավառների մարդիկ զանազան առաջարկներ էին անում, բոլորն ուզում էին ինչ-որ բանով օգտակար լինել: Նրանց շնորհիվ ես էլ հույսով ու հավատով էի տոգորվում, որ ամեն ինչ լավ է լինելու, միայն պետք է սպասենք Կենտկոմից լավ լուրերի:

Կարծում եմ նկարագրելու կարիք չկա հոգեկան այն խռովքը, որ ես ապրեցի, երբ հերթական անգամ զանգահարեցի Սերո Խանգույանին և նա ասաց, որ ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը⁷ համշենցիների դիմումը կտրուկ մերժել է: Տե՛ր Աստված, ինչո՞ւ: Ի՞նչ պատասխան պիտի տամ հեռուներում սպասող համշենցիներին, ինչպե՞ս պիտի բացատրեմ: Ամաչում էի, անսահման ամաչում:

Բայց ինչպե՞ս է եղել մերժումը: Այդ մասին Սերո Խանգույանը 1989 թ. «Հայրենիքի ծայն» թերթում տպագրված իր «Փակ դռների առաջ» հոդվածում գրում է. «Ես նորից Կենտկոմում եմ, Մինիստրների խորհրդում: Նույնիսկ Կենտկոմի առաջին քարտուղարին (նախկինին) դիմեցի.

- էլի՞, տրտմեց նա: Ի՞նչ համշենցի հայ, ի՞նչ բան, էն էլ մահմեդական: Լավ, մի քիչ սպասիր, կմտածենք:

... Ի վերջո, մեր կառավարության նախկին նախագահն ինձ անկեղծ ասաց.

- Գիտես, բարեկամս, կառավարությունը ամեն ինչ կանի, որպեսզի այդ հայերին բերի մեզ մոտ: Դրա ծախսերը չնչին բան են մեզ համար: Սակայն ... Սակայն մեր Կենտկոմի առաջին քարտուղարը (նախկին) դեմ է այդ բանին: Քանի անգամ խնդրել եմ, մերժել է:

Մինչ այս, մինչ այն, լսեցի, որ Բաղրամյանի այն նոր գյուղում, որը պահում էինք համշենցիների համար, Կենտկոմի կարգադրությամբ հապշտապ բնակեցվել է, նաև՝ ոչ հայերով: Այս մասին լուր տվի Չիրկինի հայերին: Նրանք գրեցին՝ ոչինչ, մի այլ տեղ կբնակվենք:

Դարձյալ գնացի Կենտկոմի առաջին քարտուղարի մոտ: Հենց որ ինձ տեսավ, զոչեց.

- Եթե մահմեդական հայերի հարցով ես եկել, չեմ ընդունի: Այդ հայերին ես չեմ թույլ տա, որ

⁶ Կարեն Դեմիրճյան (1932, Երևան - 1999, Երևան), պետական, կուս. գործիչ, 1966-72-ին ՀԿԿ Երևանի քաղկոմի քարտուղար, երկրորդ քարտուղար, 1972-74-ին ՀԿԿ ԿԿ քարտուղար, 1974-88-ին ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար, 1991-99-ին «Հայկելեկտրամեքենա» ԲԸ նախագահ, գործադիր տնօրեն: 1998 թ. հիմնադրել է Հայաստանի ժողովրդական կուսակցությունը: ԽՍՀՄ (1974-89) և ՀՍԽՀ (1967-89) Գերագույն խորհուրդների պատգամավոր: 1999 թ. ընտրվել է Աժ նախագահ, զոչվել է 1999 թ. հոկտեմբերի 27-ին:

⁷ Վազգեն Մանուկյան (1946, Գյումրի), ֆիզմաթ. գիտ. թեկնածու, 1972-1990 թթ. ԵՊՀ դասախոս, 1990 թ. ԳԽ պատգամավոր, 1990-1991 թթ. ՀՀ վաչապետ, 1992-93 թթ. ՀՀ Անվտանգության գծով Պետնախարար, Պաշտպանության նախարարի պաշտոնակատար և ռազմարդյունաբերական համալիրի ղեկավար, 1995-2007 թթ. Աժ պատգամավոր, 2009-ից՝ Հանրային խորհրդի նախագահ:

զան Հայաստանում բնակվեն: Չեմ թույլ տա: Վերջ:

Երկինքը փլվեց իմ գլխին: Տուն եկա զազազած: Տե՛ր Աստված, այս ի՞նչ է կատարվում...»¹⁰:

Սերո Խանգաղյանի գրածին չհավատալու որևէ պատճառ չկա, քանի որ այն ժամանակ, երբ նա տպագրում էր հոդվածը, Կարեն Դեմիրճյանը ողջ էր և կարող էր հրապարակայնորեն հերքել կամ պարզաբանումներ անել:

Հոդվածը շատ մեծ արձագանք ունեցավ, շատերն էին ինձ հարցեր տալիս, մանրամասներ հարցնում:

Նրա մեկ տարբերակն էլ «Նողկալի մերժում» վերնագրով 1993 թ. հրատարակվել է «Գարուն» ամսագրում: Կրկին մեղադրվում է ՀԿԿ Կենտկոմը. «Ես կապվեցի մեր Մինիստրների խորհրդի ղեկավարության հետ: Այնտեղից ինձ ասացին, թե ՀԿԿ Կենտկոմն է կտրուկ արգելել այդ հայերի ներգաղթը Հայաստան»¹¹: Կրկին հերքում կամ պարզաբանում չի եղել:

Այդ մերժումից հետո փորձեցի Միջին Ասիայի և Ղազախստանի համալսարանների գոնե անհատական ներգաղթ կազմակերպել: Ինչպես որ Կրասնոդարի երկրամասում, Ռոստովի և Վորոնեժի մարզերում էին բնակություն հաստատում, այստեղ էլ մի տասը-քսան ընտանիք սեփական նախաձեռնությամբ գար, գյուղերում տներ գներ, ապրեք, որպեսզի գնալ-գալ լինեք, տարբեր վայրերում ապրող համալսարանների կապերի թելերը ձգվեին նաև Հայաստան: Բայց, իմանալով, որ Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղարը խիստ դեմ է իրենց գալուն, նրանք ևս չէին ցանկանում առձակատվել ամենագոր Կենտկոմի հետ:

Անկեղծ ասած, ես մինչև այսօր էլ չգիտեմ, թե մերժման պատճառը ո՞րն էր, համալսարանի մահմեդական լինելը, բայց այդ մարդիկ զոհեր էին, բռնի կրոնափոխվածների սերունդներ, ովքեր մահվան սպառնալիքի պայմաններում սերնդեսերունդ պահպանել էին իրենց հայերեն լեզուն, մարդիկ, ովքեր ցանկանում էին վերադառնալ ազգային արմատներին, ապրեին Հայաստանում, երեխաներին հայկական կրթությամբ դաստիարակեին: Իսկ կրոնական արարողությունների մասնակցում էին միայն ծերերը, այն էլ, եթե մոտակա որևէ բնակավայրում մզկիթ կար:

Խորհրդային Միությունում ամենուր արեխտական քարոզ էր, և հենց Հայաստանում էին եկեղեցիներն ավերվել և ՀԿԿ ԿԿ գլխավորությամբ հակաքրիստոնեական և արեխտական արշավանքներ էին կազմակերպվում, մշտական հսկողության տակ պահվում քրիստոնեության ամեն մի դրսևորում: Իսկ այդ ընթացքում Հայաստանում անշեղորեն, դա կոմկուսի ամենապիրած բառերից էր, անշեղորեն աճում էր մահմեդական աղբյուրներից և քրդերի թիվը: Այսպես, 1959 թ. Հայաստանում բնակվում էր 107 հազար 800 աղբյուրներից, 20 տարի անց՝ 1979թ.՝ 160 հազար 800 աղբյուրներից, այսինքն՝ աճը կազմել էր 53 հազար հոգի, քրդերի (այդ թվում՝ եզդիների) քանակը 1959 թ. կազմել էր 25 հազար 600 հոգի, 1979 թ.՝ 50 հազար 800 հոգի, այսինքն՝ կրկնապատկվել էր: Այս հսկա թվերի մոտ զարմանալի է մի քանի հարյուր հայախոս համալսարաններին մերժելը, ինչը կարելի է բնորոշել միայն Սերո Խանգաղյանի հոդվածի վերնագրով՝ նողկալի մերժում:

¹⁰ Ս. Խանգաղյան, Փակ դռների առաջ, «Հայրենիքի ձայն», 1989, մայիսի 10, նույնը՝ «Չայն համալսարան», 2012, N 3-4:
¹¹ Ս. Խանգաղյան, Նողկալի մերժում, «Գարուն», 1993, թիվ 8, էջ 15:

ՆՈՐ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ԱՐԴՎԻՆԻ ՆԱՏԱՆՔԻ ՕՍՄԱՆԻՅԵ ԳՅՈՒՂՈՒՄ



ԵՐԳՈՒՄ Է ՆՈՒՐՁԱՆԸՄ ԳՅՈՒՄՈՒՇԱՅԱՆ
39 տ., ծնվել է Օսմանիյե գյուղում, այժմ բնակվում է Մտամբուլում

ԱՄԱ ԴԱՐԳԷԹ

Աչվեհիյե չախալ ին, Քունքուլեթ յան սանդե գուգ, Դա՛, քեզիցի ի՞նչ աղավ, Ախչբենուն չարթե գուգ:

Կրկներգ

Ասա դարդեթ ինձիցի, Մադալ էլլիմ քեզիցի, Դա՛, ասա թուն քու դարդեթ, Թե՛րման էլլիմ քեզիցի:*

Քու դարդին թաղ թա գենդե Թուն քեզիցի ի՞նչ քիդե, Վեյի արդին սե՞րմն էս թա, Չիափնան չա, քյաղան էս:

Մեզ արաբա մե ունիս էրա՞նդ ա թա, էրանդ ա, Մեզ նեշանլու մալ ունիս, Քինթե ույման էրգեն ա:

*Կրկներգը կրկնվում է յուրաքանչ-յուր քառատողից հետո:

ԱՄԱ ԴԱՐԳԴ (Քարգմանություն)

Աչքերդ կապույտ՝ են, Մազափունջդ մի կողմ ես սանրում,

Դա՛, քեզ ի՞նչ եղավ, Աղջիկներին ջարդում ես:

Կրկներգ

Ասա դարդդ ինձ, Մատաղ լինեմ քեզ, Դա՛, դու ասա քո դարդը, Մի ճար լինեմ քեզ:

Քո դարդին թե դեղ ես անում, Դու քեզ ի՞նչ գիտես, Վերին արտի սե՞րմն ես, Քաղաքից չե, գյուղից ես:

Մեկ ավտոմեքենա ունես, Միրո՞ն է, սիրում, Մեկ նշանած էլ ունես, Քիթն իրենից երկար է:

¹ Բնագրում՝ չախալ, թուրք. չաքը՝ կապույտ, մոխրավուն կապույտ:

ՄՕՆԱ, ՄՕՆԱ

Դա՛, աշունդ քա անա, Դոնձեցան խավոլ քաշա, Յէս ու միդեդ էնգիմ նա, Ջուր մալ ավելի քաշա:

Կրկներգ

Մադմոնե մոնա, մոնա, Բութուն գենջեթ փանն ա, Թուն քուլեդեր ինձիցի, Ասպած ալ քեզի քուլա:*

Քուքուն քուքա գոնչա գու, «Ալիմին» քելոխն ի վա, Քու մոյե քելոխն ի վա, Գենջեթ քելոխն ի վա:

Էնգավ ցածե մերալե, Մաքրիյալին մեշն ի վա, Վո՞ թուխուլիզ գունգոլ ա Իդա էրանդ հեթ ի վե:

Խոսքը և

երաժշտությունը՝ ժողովրդական

* Կրկներգը կրկնվում է յուրաքանչ-յուր քառատողից հետո, երգի տարբեր տողեր կամ երկտողեր կրկնվում են:

ՄԱՆԻՐ, ՄԱՆԻՐ (Քարգմանություն)

Դա՛, աշունդ որ գա, Տանձենուց խաղող քաղիր, Ես որ միտքդ ընկնեմ, Մի ճուր չե ավելի քաղիր:

Կրկներգ
Իլիկը մանիր, մանիր, Բուրդը կնոջդ արածն է, Դու ինձ այրեցիր, Աստված էլ քեզ այրի:

Կլուն կգա, կկանչի «Ալիմին»՝ վերևում, Քո մոր գլխավերևում Կնոջդ գլխավերևում:

Իջավ մշուշը Մաքրիյալի մեջ, Ո՞ր թխամորթն է կանգնելու Այդ գեղեցկությանդ կողքին:

¹ Դա - դիմելածն արական սեռի ներկայացուցիչներին:

² Բնագրում «քաշա», այսինքն՝ քաշի, որն օգտագործվում է «քաղիլ» իմաստով:

³ «Ալիմ»- թեյի թփերից քաղված տերևները գնելու պահեստ-գրասենյակ, որի վրա գրված է լինում «Ալիմ», որը թուրքերեն նշանակում է «գնում»:

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«ՔԱ ԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ և ԱԳՈՒՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՄԻ ԳԻՏԱՂՋԱՏՈՂ»

ԱՄԱ, ՅԷ՛ ՄԱ, ԱՄԱ՛

Ասա՛, յե՛ մա, ասա՛, քու դարդեթ շադ ա, Բազի բիր քալես գու արդն ի վեր՝ խոդա, Յե՛ մա, քըլխութ յազման մերաքիլ խադ ա, Թուն աեցար յե՛ մա, յես ալ աեցա:

Ամար քուքա, ալի լահանա կըղի, Քոյչիյե քալի գուն՝ լերն ի վեր թելին, Յե՛ մա, թուն աս դայի քոյչ էնոլ չե՞ս թա, Բոյնա իդբան լոլ էս, վազ ասնոլ չե՞ս թա:

Խոսքը և

երաժշտությունը՝ ժողովրդական

ԱՄԱ, ՄԱՅՐԻՎ, ԱՄԱ՛ (Քարգմանություն)

Ասա՛, մայրիկ, ասա՛, քո դարդը շատ է, Երբեմն գնում ես արտն ի վեր՝ խոտի, Մայրիկ, գլխաշորդ հաճելի գունավոր է, Դու այրվեցիր, մայրիկ, ես էլ այրվեցի:

Ամառ կգա, էլի կաղամբի տերևներդ՝ կտրիր, Քոչերդ՝ գնում եմ՝ յայլա եմ ելնում, Մայրիկ, դու այս տարի յայլա չե՞ս բարձրանալու, Միշտ՞ այդպես լացելու՞ ես, չե՞ս դադարեցնելու:

¹ Բնագրում «լահանա կըղի», բառացի թարգմանվում է «կաղամբ կտրիր»։ խոսքը ոչ թե գուլիս կաղամբի, այլ Սև ծովի ափերին շատ տարածված, տերևներով կաղամբի մասին է, որին քրիստոնյա և մահմեդական համայնքներն ասում են «պոնջար», թուրքերը՝ «քարա լահանա»՝ սև կաղամբ։ Այդ կաղամբի տերևներով պատրաստում են մի շարք ճաշատեսակներ։

² Քոչ - մի վայրից մյուսը տեղափոխվելու համար բարձրված գույքը և տեղափոխությունը, նաև յայլա՝ սարատեղի գնալը, գնացողների խումբը։

³ Բնագրում՝ բոյնա, թուրք. boyuna - անվերջ, անընդհատ, անդադար, շարունակ, հավիտյան, միշտ։

ԽԱՂԻԿ

Դանան ու քալեցեր, Շալե մոլիյեցա՞ր թա, Մեզ դոնումին «հա» ասացիր, Մեզալին մոլիյեցար:

(Տնից որ գնացիր, Շալը մոռացա՞ր, Մեկ անգամ «հա» ասացիր, Մյուս անգամ մոռացար):

«ՀԱՄՇԵՆԱԿԱՆ ԶՐՈՒՑԱՐԱՆ»
Մերգեյ Վարդանյանի
հեղինակային հաղորդաշարը Լրատվական ռադիոյի եթերում
կարող եք լսել յուրաքանչյուր
չորեքշաբթի՝ ժամը 17.20-ին, և հինգշաբթի՝ ժամը 13.20-ին:
Լրատվական ռադիո FM 106.5 Lratvakan.am

ԱԳՆԱՆ ԳԵՆԶ
Լրագրող, գրող
Սրբանբուլ

ՆԱԽՇԵՆՑԻ ԵՄ, ԲԱՅՑ ԻՆՁ ԱՆԳՒԻԱՑՈՒ ՊԵՍ ԵՄ ԶԳՈՒՄ

Իմ մշտական ընթերցողները (մի տեսակ ամպագոռոռ է հնչում) ինձ գիտեն... Համշենցի մշակույթի վերաբերյալ գրելն իմ պարտականությունն էմ համարում։ Սիրում էլ եմ... Բացի այդ՝ իմ (մեր) կատարած աշխատանքն արդեն անիմաստ հակազդեցության տեղիք էլ է տալիս... Բնականաբար, աշխատանք էլ չէ... Համշենցի մի քանի գյուղ. համշենցի կարելի է գտնել Արևելյան Սև ծովի արևելքում, Սաքարիայի և Էրզրումի շրջակայքում... Պետք է նշեն, որ գրանցվի մեկընդմիջում... Մենք կանք մալ Հայաստանում, Ղրղզստանում, Ռուսաստանում և Աբխազիայում։ Որպես մի ժողովուրդ, ով իր արմատները հյուսել է օտարության մեջ։ Աշխարհի ցանկացած երկրում կանք, սակայն մեր խնդիրը դա չէ։ Հակառակ դեպքում կզրկենք, թե ինչպես է Ճապոնիայում մեր մի ընկերը քայքայ պատրաստող մեր համընդհանուր տեսել։



Նաև Համշենցի մշակույթն ուսումնասիրող միություն ունենք։ ՀԱՏԻԿ-ը... Այն մի կազմակերպություն է, որը հեռու է քաղաքական հայացքներից և ներկայացնում է վճռական և կարգ ու կանոնի հետևող մարդկանց մի խումբ։ ՀԱՏԻԿ-ը հայտարարությամբ հանդես եկավ, որն ուղղված էր տգետ, մարմանդ գետի պես վտանգավոր փառամուլների դեմ... Ղեռևս այս կազմակերպության անդամ չեմ, նույնիսկ իրենց ֆեյսբուքյան էջին էլ չեմ հետևում։ Այդ իսկ պատճառով նոր տեղեկացա և ներկայացնում եմ ձեր դատին։

Վերադառնանք խնդիրներին... 22 համշենցի միություն հավաքվելով գրպարտում են մեր կազմակերպած միջոցառումները, կատարած ուսումնասիրությունները և այլ աշխատանքները։ Բնականաբար, տգետ են, չափն անցել են, գրպարտում են... Մենք սրանից խնդիր չէինք սարքի, թե կասկածի տակ չդնենք նրանց՝ «Մենք թուրք ենք և եկել ենք Միջին Ասիայից» արտահայտությունը, որը պատահական տեղից մեզ թարգմանել են, այն էլ համշենցերեն (այսինքն՝ հին հայերեն)։ Եղբայր, լավ ես ասում, բայց ինչո՞ւ ես հայերեն ասում...

Նման մի օրինակ էլ բերեմ։ Հարցն ուղղեցինք նրանց, ում շնորհիվ լազական մշակույթը մշակվել է, և պետական դպրոցներում, թեկուզ ընտրովի (ղեռևս), լազերենով կրթություն է մտցվել։ Մոտ 20 տարի շարունակ այս ուղղությամբ աշխատանքներ են կատարվել։ Նախ՝ լեզվին տեր կանգնելու համար հրատարակել են բառարաններ, ուղղագրական բառարաններ, տարբեր տեքստերից (վեպ, հեքիաթ, թյուրքյու) կազմված լազերեն գրքեր։ Ամսագրեր են հրատարակել... Լեզվաբանական և մշակութային ուսումնասիրությունների համար ստեղծել են լազական ինստիտուտ։ Որոշ ժամանակ՝ Բողազիչի համալսարանում, այս տարի էլ Բիլգի համալսարանում լազերենի դասընթաց սկսեցին։ Երաժշտական խմբերի՝ ամենասկզբից սիրելի Քազըմ Քոյունջուի և այժմ այլևս կազմալուծված Ջուղաշի Բերեկի խմբի և տասնյակ անանատիպ խմբերի աշխատանքները հասել են մեր օրեր...

Մենք՝ համշենցիներս, հավանաբար լույ թխվածք չենք թխել... Մեր լրագրող եղբայր Ուղուր Բիրյուլն անգամ գիրք է գրել, որի հիման վրա փաստագրական ֆիլմ է նկարվել։ Համշենցերեն ֆիլմեր ենք նկարել, երաժշտական խմբեր և երաժիշտներ ունենք այլևս... Ղանդաղ, սակայն հստակ քայլերով առաջ ենք գնում... Սակայն... Բայց... Իրենց թուրք համարող համշենցի ժողովրդի մի հատվածին ասելիք ունենք... Թուրքերեն ենք ասելու, որովհետև անձամբ համշենցերեն չգիտեմ, և հավատացե՛ք՝ համշենցերեն տեքստ գրողների թիվն անգամ երկու ձեռքի մատների թիվը չի անցնի...

«Համշենցի մշակույթի ուսումնասիրման և պահպանման միությունը (ՀԱՏԻԿ), որը ստեղծվել է 2011 թ.՝ Համշենցի լեզվի, մշակույթի և պատմության ոլորտում սոցիալ-մշակութային գործունեություն ծավալելու, բնությունը պահպանելու և անդամների միջև փոխօգնություն հաստատելու նպատակով 2015 թ. հուլիսի 9-ին՝ հինգշաբթի օրը, հեծվելով ՀԱՏԻԿ-ի ղեկավար խորհրդի 2015 թ. հունիսի 18-ի թիվ 09/2015 որոշման վրա՝ հանդես եկավ հայտարարությամբ՝ ուղղված իր անդամներին և հասարակայնության հետաքրքրված հատվածին։ ՀԱՏԻԿ-ը ժողովրդավարական կազմակերպություն է, որը ստեղծվել է՝ համաձայն Թուրքիայի Հանրապետության օրենքների։ Կազմակերպությունն իր գործունեությունը ծավալում է կանոնադրության մեջ նշված կետերի համաձայն։ ՀԱՏԻԿ-ի սկզբունքները, պաշտոնական գաղափարախոսությունից անկախ դիրքորոշումը, Համշենցի լեզվի, մշակույթի և պատմության վերաբերյալ հայտնի տեսակետներից տարբերվող տեսակետներ, գաղափարներ արտահայտելու ուղղությամբ դիրքորոշումը ստեղծման պահից ի վեր որոշ շրջանակների անհանգստություն է պատճառում, որն էլ զագրախոսության, մեղադրանքի, խեղաթյուրման և սպառնալիքների պես սև քարոզչությամբ է արտահայտվում։ Որպես կազմակերպություն՝ օրենքի շրջանակներում մեր ծավալած որոշ արվեստի, մշակութային և սոցիալական գործունեությունը, ինչպես նաև մշակույթի և արվեստի բնագավառում մեր անդամների հողվածները, գրքերը, ամսագրերը, համերգները, գիտաժողովներն ու շրջայցերը մեր շրջանում համարվում են, այսպես կոչված, հայկական քարոզչության դրսևորում, իսկ մեր միությունն ու մշակույթի և արվեստի բնագավառի մեր անդամների համագործակցությունը՝ միսիոներություն և այլն։ Մեղադրելով, թե այս գործունեությունից նյութական շահ ենք հետապնդում մեզ թիրախ են դարձնում և սպառնում։

* ՀԱՏԻԿ-ը միություն է, որը ստեղծվել է, որպեսզի դեմ կանգնի պաշտոնական գաղափարախոսությանը, որի հիմքում ընկած են ասիմիլիացիան և ժողովուրդների ժխտողականությունը։

* ՀԱՏԻԿ-ը նաև այնպիսի մի միություն է, որտեղ հավաքվել են նրանք, ովքեր այնքան են, թե համշենցիները հայ են։

* ՀԱՏԻԿ-ը դեմ է ռասիզմի ցանկացած դրսևորման և մշտապես գործել է մարդկային սկզբունքով։

* ՀԱՏԻԿ-ը, պարզ ասած, երբեք որևէ հայտարարություն չի կատարել համշենցիների թնիկ ծագման վերաբերյալ և չի էլ կատարում։

* ՀԱՏԻԿ-ը գործունեություն է ծավալում ոչ թե համշենցիների ծագման կամ էթնիկ արմատների պարզման, այլ համշենցիների՝ անցյալից ձգվող մշակույթն ապագային փոխանցելու և ներկայի համար անհրաժեշտ քայլեր կատարելու ուղղությամբ։

* ՀԱՏԻԿ-ը ջանում է լինել բոլոր համշենցիների կազմակերպությունը, որը գաղափարապես հարուստ է, ժողովուրդների և կրոնների դեմ ասելության, վրեժխնդրության և ստորացման քաղաքականություն չի վարում և քաղաքակրթորեն միավորում է տարբեր գաղափարներ ունեցող մարդկանց։ ՀԱՏԻԿ-ի

Մեր միության աշխատանքները օրինական, մշակութային, սոցիալական և արվեստի բնույթ են կրում։ ՀԱՏԻԿ-ը ցայսօր ոչ երկրի ներսից, ոչ էլ արտերկրի որևէ կազմակերպությունից կամ անհատից որևէ նվիրատվություն չի ստացել։ Կազմակերպության ծախսերը հոգացել են անդամների կամավոր վճարումներով։ Այն, որ մեր կազմակերպության կենտրոնում համշենցերենի դասընթաց է կազմակերպվում, ուսանողներին կրթաթոշակ է տրվում, զբոսախմբույթ, համերգ կամ էլ յայլաներում միջոցառումներ են կազմակերպվում, գիրք կամ ամսագիր է լույս տեսնում, որևէ գիտաժողովի կամ շրջայցի ժամանակ ինչպես տարբեր ազգերի ներկայացուցիչներ, այնպես էլ Հայաստանից արվեստի և մշակույթի ներկայացուցիչներ են մասնակցում, մեր այս քաղաքակրթիք հարաբերություններն ու գործունեությունը որակվում են որպես միսիոներականություն, համագործակցություն՝ վատ իմաստով, անգամ՝ դավաճանություն, սակայն դա գաղափարապես թերի, ազգայնամուլական, խղճուկ ուղեղների արդյունքն է։ Մենք ժխտում ենք այս անհիմն, կեղտոտ պնդումը, մեղադրանքն ու զագրախոսությունը, որն ամբողջովին այս մտայնության պտուղն է։ Բնական է, որ հասարակության մեջ տարբեր տեսակետներ ու գաղափարներ կան, սա խոսքի և գաղափարների ազատության արդյունք է։ Տարբեր գաղափարները, դիրքորոշումն ու աշխատանքները միտքը պղտորող պարանոյայով, հիմարաբանությամբ և երևակայությամբ քարոզարելով և կարծես թե գաղտնի ծրագրի մի մաս բացահայտելով՝ քաղաքականացնում, հասարակությանը լարում, միամտացնում են, ինչն էլ նախևառաջ վնասում է Համշենցի հասարակությանը։ ՀԱՏԻԿ-ի նպատակն ու սկզբունքները պարզորոշ նշված են կանոնադրության մեջ։

* ՀԱՏԻԿ-ը միություն է, որը ստեղծվել է, որպեսզի դեմ կանգնի պաշտոնական գաղափարախոսությանը, որի հիմքում ընկած են ասիմիլիացիան և ժողովուրդների ժխտողականությունը։

* ՀԱՏԻԿ-ը նաև այնպիսի մի միություն է, որտեղ հավաքվել են նրանք, ովքեր այնքան են, թե համշենցիները հայ են։

* ՀԱՏԻԿ-ը դեմ է ռասիզմի ցանկացած դրսևորման և մշտապես գործել է մարդկային սկզբունքով։

* ՀԱՏԻԿ-ը, պարզ ասած, երբեք որևէ հայտարարություն չի կատարել համշենցիների թնիկ ծագման վերաբերյալ և չի էլ կատարում։

* ՀԱՏԻԿ-ը գործունեություն է ծավալում ոչ թե համշենցիների ծագման կամ էթնիկ արմատների պարզման, այլ համշենցիների՝ անցյալից ձգվող մշակույթն ապագային փոխանցելու և ներկայի համար անհրաժեշտ քայլեր կատարելու ուղղությամբ։

* ՀԱՏԻԿ-ը ջանում է լինել բոլոր համշենցիների կազմակերպությունը, որը գաղափարապես հարուստ է, ժողովուրդների և կրոնների դեմ ասելության, վրեժխնդրության և ստորացման քաղաքականություն չի վարում և քաղաքակրթորեն միավորում է տարբեր գաղափարներ ունեցող մարդկանց։ ՀԱՏԻԿ-ի

դռները բաց են այսպիսի արժեքներ ունեցող բոլոր համերկրացիների առաջ։

ՀԱՏԻԿ-ն առանց ուշադրություն դարձնելու այս որոշակի շրջանակի սպառնալիքներին, ատելությանը, վրեժխնդրությանն ու պախարակումներին, ինչպես որ մինչև այսօր, այնպես էլ այսուհետ շարունակելու է Համշենցի մշակույթի, լեզվի և պատմության ոլորտում մշակութային, սոցիալական, արվեստաբանական և ակադեմիական աշխատանքները, որպես մեր երկրի ժողովրդավարական հասարակության մի մասնիկ՝ իր իմացած ճշմարիտ ուղով լինելու է բոլոր ժողովուրդների ծառան, պայքարելու է այնպիսի Թուրքիայի համար, որտեղ գերակայում է օրենքը, որը ժողովրդավարական, աշխարհիկ, անկախ և ազատ է լինելու։ Ելնելով այս գաղափարներից և մտայնությունից՝ մեր կազմակերպությունը քննադատում է մեր որոշ անդամներին և արվեստի բնագավառի մարդկանց թիրախ ընտրած անբարոյական, վատ և սև քարոզչությամբ զբաղվող մարդկանց՝ կոչ անելով վերջ տալ այս կեղծիքին և մեղադրանքին։ Այս կեղտոտ գործունեությունը շարունակելու դեպքում մեր անդամներին և հասարակությանը սիրով տեղեկացնում ենք, որ միությունը և մեր անդամները, որոնց հասցեին մեղադրանքներ, հայիոյանք, զագրախոսություն և սպառնալիքներ են հնչել, պահում են իրավական ճանապարհների դիմելու իրենց իրավունքները։

Համշենցի մշակույթի ուսումնասիրման և պահպանման միություն (ՀԱՏԻԿ)»։

Խոսքս շարունակեմ մի զվարճալի պատմությամբ։ 2000 թ. «Ֆոթոգրաֆիկ»-ի գործընկերն ու աշխատակիցն էի։ Մեր հայ ընկերներից մեկն ասաց, որ ցանկանում է գնալ Մաչախալ (Արդվինում մի հոյակապ յայլա է) և լուսանկարներ անել այնտեղ։ Նրան մարդկանց հասցե և հեռախոսահամար տվեցի, որոնց հետ կարող էր կապվել՝ գործը հեշտացնելու համար... Վերադարձավ և սկսեց ոգևորված պատմել. «Եղբայր, Խոսայում հաց են ուտում։ Կողքի սեղանին երկու հոգի խոսում են իրար մեջ, լավից-վատից հասկանում են։ Բարի այսրո՞՞՞՞ մտքերով՝ հարցրեցի, թե ի՞նչ լեզվով են խոսում... Պատասխանեցին, թե «Ոչ բոլորը կհասկանան, միայն մեր գյուղում են հասկանում», այնուհետև ավելացրեցին՝ «Համշենցերեն ենք անվանում մեր գյուղում»։ Այս անգամ հայերեն հարցրեցի՝ «Լավ, իսկ ես ձեր խոսացածն ինչպե՞ս եմ հասկանում»։ «Հավանաբար համշենցի ես, սակայն մենք քեզ չենք ճանաչում»։ Այս անգամ ամբողջովին անցա հայերենի և երբ ասացի՝ «Շատ բարի, ձեր բոլոր ասածները հասկանում եմ։ Այ մարդ, ես հայ եմ, դուք էլ հայերեն եք խոսում», ջղայնացան և ասացին՝ «Մենք թուրք ենք, համշենցի ենք»։ Անգամ սա հայերեն ասացին... Այդ, ով ինչ գգում է, այն էլ իրականությունն է։ Եթե ինձ հարցնեք, ապա այդ, և՛ համշենցի եմ, և՛ ինքս ինձ անգլիացի եմ գգում...

Հը՞, այսպես լա՞վ է։

Թարգմանեց Անահիտ Քարտաշյանը
Akunq.net

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ։ Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՏԵՆ» հայրենակցական-քարոզչական հասարակական կազմակերպություն։ Հասցեն՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8։ Հեռախոս՝ (+374+10) 20 21 26։ Գրանցման վկայական՝ N 03Ա054979, տրված՝ 26.06.2002թ.։ Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին։ Արտատպության կամ մեքերման դեպքում իրումը «Չայն համշենցիականին» պարտադիր է։ Հրատարակվում է 2004թ. օգոստոսից։ Տպագրվում է «ՆՏ Հոլիդնգ» ՍՊԸ-ում։
«ДЗАЙН АМШЕНАКАН» (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации «АМШЕН» (г. Ереван), Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЯН. Издаётся с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. «HAMSHEN» Compatriotic-charitable public organization (Yerevan). «DZAYN HAMSHENAKAN». Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org